

# Անթապ (Andiabe) - Այնթապ Պատմա - բանասիրական ձեգրտումներ

ՍՈՒՐԷՆ Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

## ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

Այնթապի Հայրենակցական Միութեան հիմնադիր անդամների եւ մասնակորացիս Փրոֆ. Գէորգ Ա. Սարաֆեանի նախաձեռնութեամբ 1953 թ.ին լոյս ընծայուեց «Պատմութիւն Անթէպի Հայոց» ստուարածաւալ (երկհատոր) աշխատութիւնը, որտեղ ամենայն մանրամասնութեամբ ու դիտական բարեխղճութեամբ տրուել են Այնթապի եւ նրա շրջակայ տարածքի պատմա-աշխարհագրական նկարագրերը, բարձր է դնահատուած այնթապցիների ներդրած աւանդը դիտութեան եւ գրականութեան, ինչպէս նաեւ տնտեսական կառավարման ու արհեստագործութեան զարգացման ընդաւաններում. ղետեղուած ու մասնակի քննութեան են ենթարկուած գրի առնուած բարբառային ու բանահիւսական արժէքները, զգալի տեղ է յատկացուած նաեւ թուրք ցեղասպանների դէմ զէնքը ձեռքին կոռուղ հայ մարդկանց սխրանքների փառարանմանը: Աշխատութեան երախտաւոր հեղինակներն այդ բոլորով հանդերձ՝ միաժամանակ եփրատամբումնջ մի պսակ են հիւսել՝ նուիրելով անհաւասար մարտերում ընկած հայ քաջորդիների ու հազարաւոր անմեղ զոհերի խնկելի յիշատակին:

«Պատմութիւն Անթէպի Հայոց»ի առանձին գլուխներ նուիրուած են այդ զարհուրելի դէպքերից մի կերպ փրկուած այնթապցիների սփիւռքում ծաւալած գործունէութեան նկարագրութեանը, բերուած են բազմաթիւ փաստեր հայ եւ օտար աղբիւրներից եւ մանրամասն ցուցադրուած են Այնթապի Հայրենակցական Միութեան գոր-

ծունէութիւնը, հրապարակուած են տարրեր անհատների մօտ պահուած գիտական ու գրական արժէքաւոր գործեր, առաջին անգամ շրջանառութեան մէջ են դրուել արխիւային բազմազան նմոշներ՝ դրամագիտական գտածոներ, լուսանկարներ, յուշեր ու յուշագրութիւններ, բնագրերով ու թարգմանաբար օգտագործուել են անգլերէն, Ֆրանսերէն, թուրքերէն լեզուներով ժամանակին հրապարակուած շատ նիւթեր, որոնք վերաբերել են Այնթապի եւ նրա շրջակայ բնակավայրերի պատմութեանը, մարդկանց կենդանի գործունէութեան նկարագրին :

Մի առանձին սիրով ու երկիւղածութեամբ թերթելով «Պատմութիւն Անթէպի Հայոց»-ի էջերը, մեր առջեւ վեր են յանում երախտաւոր-բանահաւաք-բանասէր Բարդէն Կթղ. Կիւլեսերեանի, Տէր Շահէ Արքեպիսկոպոսի, Ներսէս Թաւուզճեանի եւ այլոց պայծառ կերպարները, իրենց քաղաքին ու նրա բնակիչներին որդիական ծառայութիւն մատուցած ու անմահների շարքը մտած մարդիկ, ովքեր տարիներ ձեռնարկած պրպտումներով եւ անձնական բազմաթիւ գոհողութիւնների զնով հողեւոր մշակոյթի շատ գործեր ոչ միայն վերկել են կորստից, այլեւ մանրակրկիտ ուսումնասիրել են իւրաքանչիւր դրչազիր ու տպագիր մատեան, տուել են իրենց տարածքի բնակավայրերի տեղագրութիւնը, բնակչութեան տեղաշարժները, նրանց կեանքի ու կենցաղի նկարագիրը եւ ամէն կերպ ձգտել են վերականգնել յանիրաւի կործանուած իրենց հայրենի քաղաքի պատմութիւնը :

«Պատմութիւնն» աւելի է շահել, երբ այնտեղ եկել ու ամբարուել են այնթապցի պատմաբանների, հնագէտների, արուեստաբանների, բանագէտների, գրողների աշխատութիւններն ու յօդուածները, յուշերն ու բանաստեղծութիւնները, գրառած բարբառային ու բանահիւսական նիւթերը (Վահան Մ. Բիւրքճեան, Վերապատուելի Եղիա Ս. Բասունի, Փառէն Մելգոնեան, Գրիգոր Պողարեան եւ այլք) :

Ըստ «Պատմութիւն Անթէպի Հայոց» աշխատութեան մէջ բերուած վկայութիւնների, Այնթապ քաղաքը վերաշինուել է 10-11-րդ դարերում հին Անթապ (Andiabe) դաւառի տարրեր գիւղերից պարբերաբար տեղաշարժուած հայ ազգաբնակչութեան կողմից : Փաստերը վկայում են, որ դէպի Այնթապ հայերը մեծ հոսքով տեղաշարժուել են յատկապէս Լենկ-Թեմուրի, Շահ-Աբասի եւ Նադիր-Շահի արշաւանքների տարիներին, եւ Հին Անթապը հայ ազգաբնակչութիւնից վերջնականապէս դատարկուել է 1700-1750-ական թուականներին, իսկ առանձին գիւղեր պահպանուել են մինչեւ 1830-1860 թուականները :

Աւարտական ու գերեզմարական այդ սարսափելի ասպատակու-

թիւններից առանձնապէս շատ է տուժել Հայաստան աշխարհը, եւ նրա շատ դաւառններում կեանքը ընդհատուել է երկար ժամանակով:

«Պատմութիւն Անթէպ»ի հեղինակները թէեւ կցկտուր, սակայն վերջնականապէս յանգում են այն եզրակացութեան, որ իրենց նախնիները եկել են շրջակայ բնակավայրերից, մասնաւորապէս Անթապից: Հենց սա էլ մեզ համար դարձել է կռուան Անթապ եւ Այնթապ բարբառային միաւորների տարբերակման համար եւ, յենուելով Հին Անթապի՝ բուն Ալաշկերտի խօսուածքի բարբառային եւ բանահիւսական հարուստ փաստերի վրայ, տարածամանակեայ կտրուածքով համեմատական քննութեան ենք ենթարկել եւ ցոյց տուել նրանց միջեւ եղած ընդհանուր գծերն ու տարբերութիւնները:

Անհրաժեշտ է նշել, որ հայ լեզուաբանութեան մէջ ընդունուած է մի շարք բարբառներ կոչել մեռած, մի բան, որ ոչնչով չի հիմնաւորում: Մեռած բարբառներ չեն լինում, այլ դրանք աստիճանաբար ձուլում են այլ բարբառների եւ ձեւաւորում նոր խօսուածքներ կամ բարբառային միաւորներ: Հետեւապէս՝ եթէ Այնթապի բարբառը դեռեւս 1800-ական թուականների սկզբներին դադարել է գոյութիւն ունենալուց, ապա նրա շատ փաստեր պէտք է փնտռել նոր խօսուածքում: Մակայն մենք այդպէս չենք վարուել, այլ Այնթապի բարբառով դրի առնուած բանահիւսական նիւթերը յիշատակաբաններում առկայ բարբառային ձեւերն ու արտայայտութիւնները համեմատել ենք հին Անթապի (Andiabe) խօսուածքի հետ. վերջինս դեռեւս կենդանի է Ալաշկերտի Սաստուր, Վաղարշակերտ (Թոփրակ-Յալէ), Սոչիան, Մոլլա-Սուլէյման, Ձետկան, Ամադ եւ այլ դիւղերից 1915-1918 թթ. դաղթածների մօտ:

Մեր ձեռքի տակ եղած փաստերի վկայութեամբ, բուն Ալաշկերտի խօսուածքը մինչեւ օրս կենդանի է Սորհրդային Հայաստանի տարածքի շատ բնակավայրերում, իսկ որպէս Այնթապի բարբառ, ընկնելով Տիգրանակերտի, Սարբերդ-Երզնկայի, Կիլիկիայի եւ Ձէյթունի, Մալաթիայի եւ արեւմտեան այլ բարբառների միջավայրում, կրել է լուրջ փոփոխութիւններ՝ ընդունելով հնչիւնաքերականական մի շարք յատկանիշներ, սակայն, ունենալով ներքին զիմադրողականութեան մեծ ոյժ եւ քերականական ամուր կառուցուածք, այնքան էլ չի հեռացել իր մայր բարբառից:

Համամիտ լինելով բոլոր այն ուսումնասիրողների հետ, ովքեր Հին Անթապի (Andiabe) եւ Այնթապ քաղաքի անունների մէջ տեսնում են ընդհանուր եզրեր, տողերիս հեղինակը այդ երկու բարբառների միջուկի ստուգաբանութեան եւ համեմատական վերլուծութեան միջոցով յանգում է այն եզրակացութեան, որ բարբառային տուեալ

միաւորները սերուել են նոյն հիմքից: Այս մեկնարկներից էլ շարա-  
դրուած են մեր սոյն աշխատութեան բոլոր հինգ գլուխները:

Վերականգնելով պատմական Անքապի եւ Այնքապի բարբա-  
ռային միաւորները, մենք դրանով նպաստ ենք բերում Այնթապի  
պատմութեան մի շարք կնճռոտ հարցերի պարզարանմանը, այլեւ մեր  
համեստ ներդրումն ենք կատարում ՀՍՍՀ ԳԱ լեզուի հիմնարկի կող-  
մից ձեռնարկուած Հայերէնի Բարբառագիտական ատլասի ստեղծ-  
մանը՝ պատմական Հայաստանի շուրջ հարիւր գլուղ ունեցող մի մեծ  
դաւառի (Անթապ) բարբառային միաւորի թափուր տեղը հայերէնի  
բարբառների շարքում վերականգնելու ուղղութեամբ:

## ԱՆԹԱՊ (ANDIABE) ՏԵՂԱՆՈՒԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

Հայ պատմագրական ու բանասիրական գրականութեան մէջ,  
նաեւ օտար աղբիւրներում դարեր շարունակ յիշատակում է Անդաբ,  
Անթապ, Անտափ, Անթափ, իսկ խօսակցական լեզուում նաեւ՝ հ'Ան-  
թապ, հ'Անպադ ձեւերը, որոնք ըստ մեր կարծիքի, ծագում են հին  
ANDIABE-ից, որ յիշատակուած է Նաիրի երկրի 23 իշխանութիւն-  
ների շարքում, երբ Թիգլարպալասարը արչաւել է Հայաստան<sup>1</sup>:

Անթապն ընկած է պատմական Հայաստանի Մանազկերտ-Բա-  
զաւան ճանապարհին: Գաւառակի մասին որոշ տեղեկութիւններ պահ-  
պանուած են ասորական, հռոմէական ուղեգրական տախտակներում՝  
յիշատակուելով որպէս բերդակայան:

Վեր. Ե. Ս. Քասունին, Գ. Մեսրոպը, Ս. Նազարը եւ այլք,  
վկայակոչելով Մարկուարտին, Ն. Ադոնյան, Բ. Կիւլեսերեանին, Հին  
Անթապը ներկայացնում են այժմեան Դութաղի հետ: Այդ առիթով  
երախտաւոր բանագէտ Բ. Կիւլեսերեանը գրում է հետեւեալը. «Այն-  
քապ ձեւը նոր է: Միջնադարեան հայացի ձեւն է Անքափ, որ եղած է  
Անքէպ. եւ ըստ իս այս է շիտակ ձեւը: Պէտք է դիտնալ, որ Հայաս-  
տանի մէջ ալ կայ Անթափ ըսուած տեղ մը: (Էրզրումի նահանգին  
մէջ)»<sup>2</sup>:

Վեր. Ե. Ս. Քասունին անվերապահօրէն ընդունում է Բ. Կիւ-  
լեսերեանի կարծիքը եւ փորձում է վերջնականապէս ճշգրտել Անթա-  
պի աշխարհագրական տեղը: Նա գրում է. «Հայաստանի Անքափն  
անյիշատակ ժամանակներէ ի վեր գոյութիւն ունի, պիտի ըսենք

1. Նիկոզայոս Ադոնց, Հայաստանի Պատմութիւն, Երեւան, 1972, էջ 58:

2. Բաբգէն Եպիսկոպոս, Նօթեր Հայ Անթէպի Պատմութեան Համար, «Սու-  
րիախայ Տարեցոյց», Բ. Տարի, Հալէպ, 1925, էջ 97:

որ այս անունը վերին Հայաստանէն փոխադրուած է եփրատցուց երկիրը, եւ ամենայն հաւանականութեամբ՝ Հայկական արտագաղթի մը միջոցով: ...Կը համոզուինք թէ Անթափ անունն իսկապէս Արեւմտեան Հայաստանէն եփրատցուց երկիրը փոխադրուած նախահայկական անուն մըն է, թէ Անթափ ձեւն աւելի ուղիղ է, քան Այնթափ, եւ թէ վերջինս պարզապէս այդ նախապատմական անծանօթ ծագումով անուան արարեբէն ստուգարանութիւն մը տալ ջանքին արդիւնքն է»<sup>3</sup>:

Այնթափի վիճակի մասին ժլատ տեղեկութիւններ ենք գտնում հայր Դեւոնդ Ալիշանի «Այրարատ» ստուարածաւալ աշխատութեան մէջ: Նա գրում է. «...Նոր վիճակադրութիւն ըստ Ռուսաց (1889) համար ի դեօդ»՝ ի նահիէ կամ Գարագիլիսէ 58, յԱլաշկերտ (Փոքր վիճակօքն) 115, յԱնթափ 79, յորս միանգամայն տունս 5, 266, ոգիս 23, 200»<sup>4</sup>:

(Այս տուեալները վերցուած է «Արձագանգ» ամսագրից):

Ուշագրան այն է, որ մինչեւ 1889 թուականը Այնթափն ունեցել է 79 գիւղ, սակայն Ս. Հայկունու վկայութեամբ դրանք 1850-60-ական թուականներից սկսած աստիճանաբար դառնում էին քրդարնակ:

Դեւոնդ Ալիշանը Անթափը երբեք չի նոյնացնում Սամուրին կամ շփոթում այլ դաւառակների անունների հետ: Նա, այնուամենայնիւ, ճիշդ է տեղադրել Անթափի վիճակը: Փաստը մնում է փաստ, որ այդ տեղանունով յիշատակում է մի ամբողջ դաւառակ եւ ոչ թէ որեւէ գիւղ կամ աւան: Յայտնի է, որ Տարօն-Տուրուբերանում շատ դաւառներ ունեն առանձին անուններ, իսկ դրանց անունով բնակավայրեր չկան, ինչպէս՝ Բաղբեւանդ, Տարօն, Սուրթ, Սասուն եւ այլն:

Ալիշանը գրում է. «Ե. Անթափ — Զ. Սամուր: Վիճակքս այստքիկ աննչանք բնակեալք ՚ի հարաւոյ նորին, Սամուր յարեւելեան կողման յանկէ Եփրատայ, տարեւմտից Ծաղկոտուն: Երկուքին եւս սակաւածանօթք, վասն աղատակեաց Բրդաց ունելոյ գտեղիսն, եւ անայցելու յուղեւորաց գետոց, մանաւանդ առաջինն որ կոչի եւ Այնթափ, եւ գիրքն իսկ եւ սահմանք չեն քաջ յայտնի. զի երբեմն ընդ Սամուրի եւ երբեմն ընդ Բաղնոցի յիշի, որ արեւելից հարաւոյ կամ

3. Եղիա Ս. Բասունի, Անթափի եւ Շրջանակին Պատմութիւնը, «Պատմութիւն Անթափի Հայոց», Աշխատասիրից ու Խմբագրից Գեորգ Ա. Սարաֆեան, Ա. Խոր., Լոս Անճէլըս, 1953, էջ 186-187:

4. Ղ. Ալիշան, Այրարատ, Վեներտիկ, Ս. Ղազար, 1890, էջ 522:

համօրէն գաւառիս Բագրեւանդայ, գրեթէ ընդարձակութեամբն հաւասար յատուկ վիճակին Պայէզլիտու, 80 գեօղս եւ հանգրուանս անելով, ըստ նոր ոռոսական վիճակագրութեան, տունս կամ ծուխս 1320, ոգիս 5900: Ի շինիցն յիշի միայն վլխաւոր շէնն կամ աւանն թունաք, ուր նստի եւ վիճակագետն»<sup>5</sup>:

Ինչպէս նկատուում է վերը բերուած փաստերից Ղ. Ալիշանին քիչ բան է յայտնի եղել, եւ նա բաւարարուել է միայն հրապարակելով վիճակագրական համառօտ տեղեկութիւններ:

Անթապի վիճակի ընդարձակ տեղագրութիւնը տուել է երախտաւոր բանահաւաք Ս. Հայկունին: Նա 1880-1885 թթ. եղել է այդ վայրերում, բնակիչների օգնութեամբ ճշգրտել է աշխարհագրական տեղանունները, միաժամանակ զբառել զանազան աւանդութիւններ ու զրոյցներ:

Ս. Հայկունին թէեւ սխալում է Անթապը նոյնացնելով գաւառին, բայց եւ այնպէս, իբրեւ հմուտ տեղեկագրի, նրա բերած բոլոր տուեանները հաւաստի են եւ խիստ արժէքաւոր: Գաւառը ներկայացնում է հետեւեալ սահմաններով. «Անդրու սահմանը արեւելից՝ Արածանի, հարաւից Քեսակու ջուրն, արեւմտից՝ Բուրազան լեռներն մինչեւ Բասեան, որ զՍնուս կը բաժնեն Անդաբէն եւ հիւսիսէ՝ Ղլիճ-Կետուկի շղթայն, որ Ալաշկերտի ու Անդարի միջնավայրն է բարձրացնում»<sup>6</sup>:

Ս. Հայկունին նշում է նաեւ, որ Ալաշկերտն ու Անթապը ոչ միայն սահմանակից են, այլեւ Անթապի (Անթափ) բնակիչները պարբերաբար տեղաշարժուել են Ալաշկերտ եւ բնակութիւն հաստատել նրա տարբեր գիւղերում: Ահա այդ խիստ ուշադրաւ վկայութիւնը. «Այս վայրն, որ այժմ 100-է առաւել քրդական գիւղեր կան եւ ոչ մի հայ անհատի նշան չի տեսնուիր, մինչդեռ 1770-80 թուականներուն 30 մեծ գիւղեր կային եւ 1840-ին 5-6 գիւղեր կային, որք այժմ չկան»<sup>7</sup>:

Այնուհետեւ վկայում է, որ մինչեւ 1850-ական թուականները Անթապի գաւառի տարբեր բնակավայրերում դեռեւս պահպանուած են եղել հինաւուրց բերդերի ու քրիստոնէական տաճարի մնացորդներ, հայկական դերեզմանատներում նկատուել են հնագիտական արժէք ներկայացնող յուշակոթոցներ ու արձանագրութիւններ:

Ուշագրութեան են արժանի որոշ տեղանուններ, որոնց սկզբը նատիպ ձեւերը Հայկունին փորձել է վերականգնել կամ թարգմանա-

5. Նոյնը, էջ 541:

6. Ս. Հայկունի, Բագրեւանդ Ջրաբաշխ Գաւառ, Ա. հտր., 1890, էջ 303:

7. Նոյնը, էջ 303-304:

բար վերծանել: Ահա այդ շարքը՝ Սեւք («Սեւեր»), Տերբք («Տերեր»), Բրջօ («Առուի եզր»), Խունդին («Խենթ»), Խուպք («Խուփեր»), Դու-  
թաղ («Երկու թաղ»), Ղորալի («Անդղ»), Ղարախաջ («Սեւ փայտ»),  
Մուշեան («Մուշեղեաններ») եւ այլն:

Հայկունին սրտի ցաւով է գրում, թէ «Տերբք գիւղում կայ ամենագեղեցիկ վանք մի, որ դո՞ւմ դարձած է այսօր: Արեւելեան պատերազմէն առաջ կայր այստեղ միաբան եւ ունէր ընդարձակ գետին, վանքի դիւղն եւ շրջակաները գտնուած են Խուպք, Սեւք, Սվեր եւ այլն, գիւղօրէից մէջ կը բնակուէին եղտիք, որոնց հսկողութեան յանձնած էր Բագրեւանդու առաջնորդն այս վանքը: Եղտիք պահպանեցին միջոց մի եւ երբ 81-82 թուականներուն գաղթեցին ուսական հողը, Կարուց Կոլայէն այստեղ գաղթող թերեքեմէ թուրքերն մտագիր էին մզկիթ շինել, յետոյ ոչխարաց դո՞ւմ դարձուցին»<sup>8</sup>, իսկ Խարաջան գիւղն ունի «չորս եկեղեցի եւ մի վանք, վանքը գոյնզգոյն քարերէ հիւսուած է յարմար ճաշակաւ, 20 վայրկեան գիւղից արեւելեան հիւսիս բարձր գիրքի վրայ շինուած է Ս. Յովհաննէս անուամբ, ունէր շուրջն ուռնետոյ ծառաստան»<sup>9</sup>:

Ուրեմն ըստ Հայկունու, Խարաջանը ոչ միայն հին բերդաքաղաք է, այլեւ քրիստոնէական պաշտօնական եկեղեցու խոշոր կեդրոններից մէկը, որտեղ, հաւանաբար, եղել են դպրոց, գրչատուն եւ մշակութային այլեւայլ օջախներ, որոնք դարերի ընթացքում վերացել են՝ պարբերաբար կրկնուող պատերազմների ու երկրաշարժերի պատճառով:

Այստեղ դժուարութիւն յարուցողը Խարաջան անունն է, որ կարելի է տարբեր ձեւով մեկնել՝ Սեւ ջան, Հար/ա/ջան, սակայն դրանով նոր բան ասած չենք լինի: Կարելի է զուգահեռ տեսնել Բալանըխում գտնուող Բլեջան տեղանունան միջեւ, ընդ որում՝ Բլե-ջան ժողովրդական աւանդապատումներում յիշուած է իբրեւ Բելի ջան «մարմին», իբր թէ այդ բլրի վրայ թաղուած է եղել Բելը. կարելի է կարծել, որ Խարա-ջան ասելով պիտի հասկանալ Հարա-ջան, այստեղ թաղուած է եղել Արան: Բառասկզբի Հն Խ-ի փոխուելու պատճառով, որը եւ օրինաչափ երեւոյթ է Բագրեւանդ-Դարոյնք-Անթապ բարբառախօս վայրերում, դարեր շարունակ հնչել է իբրեւ Խարա, որը եւ պատահականօրէն զուգադիպել է թուրք-պարսկական Խար «սեւ» բառին: Սակայն սա սոսկ ենթադրութիւն է եւ կրում է խիստ մասնաւոր բնոյթ:

8. Նոյնը:

9. Նոյնը:

Անթապի տեղանունները հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ մի այլ տեսակէտից: Վկայութիւններ կան, որ այդ անունները այսպէս թէ այնպէս պահպանուել են անթապցիների կողմից հիմնուած նոր բնակավայրերի անուանումներում, այնպէս էլ առանձին գերդաստանների ազգանուններում:

Հայկունին յիշատակում է, որ հարաջան գիւղում «Բասկելի-չի» միջոցին 500 տուն զուտ հայ կար: 1856 թուին 60 տուն հայ եւ 300 տուն քուրդ հաստատուած էր, հայեր տակաւ առ տակաւ ցրուեցին, դացին հասան իւրեանց գաղթական ազգակցաց, ոմանք եւս Սաստուր գիւղ գետեղուեցին»<sup>10</sup>:

Երախտաւոր բանահաւաքը բացի Սաստուր գիւղից, ցաւօք, այլ բնակավայրերի մասին չի յիշատակում: Մեզ յայտնի են, որ Սաստուր են եկել Թելլու, Բորօ եւ Քոչէ տները, որոնցից մէկը մինչ օրս կրում է Սարաջանեան ազգանունը: Եւ դա վերյիշեցնում է որ այդ գերդաստանը սերում է Անթապի Սարաջան գիւղից: Սարաջանեան ազգանունը տարածուած է եղել նաեւ Անթապ քաղաքում:

Սարաջան գիւղից գաղթած Թելլա Յովհաննէսից Հայկունին դրի է առել մի հետաքրքրական գրոյց, որն ուշադրաւ է ոչ միայն իր բովանդակութեան տեսակէտից, այլեւ բարբառային առանձնայատկութիւններով, որով հնարաւոր է լինում վերականգնել Անթապի հարաջան գիւղի խօսուածքը: Եղբակացութիւնը մէկն է, որ հարաջանի եւ հաստուրի խօսուածքները իրարից ոչնչով չեն տարբերում: Հայկունու գրառած գրոյցի հնչիւնաքերականական եւ ոճական առանձնայատկութիւնները ցոյց են տալիս, որ թէեւ այն ստեղծուել է Սաստուրում, սակայն պատմողը բնիկ Սարաջանցի է: Կարծում ենք, որ 30-40 տարի իր հայրենի գիւղում ապրած Թելլու Յովհաննէսը նոր միջավայրում (Սաստուր) 20 տարուայ ընթացքում չէր կարող հիմնովին փոխել իր բարբառը:

Յենուելով այդ գրոյցի, ինչպէս նաեւ Սաստուրի եւ մասնաւորապէս Ալաշկերտի մի շարք գիւղերի խօսուածքների վրայ, մենք մեզ լրիւ իրաւունք ենք վերապահում յետադարձ քննութեամբ վերականգնել Սարաջանի խօսուածքը, որով եւ Անթապի բարբառը համեմատել ենք Այնթապում գրաւոր միջակում պահպանուած նմոյշների հետ:

Համեմատական քննութիւնից պարզուում է, որ Անթապ գաւա-

10. Նոյնը: Այդ գերդաստաններից մէկը տողերիս հեղինակի մեծ պապի (Մանուկի - Բորոյ-) անունով յիշատակում է միւնչե օրս, իսկ Քոչէ տնից վարդաբը, որ «Սասնայ Ծոռք»ի բանասացներից է, պատուել է 1899 թ.ի հաստուրի կոտորածի ժամանակ:

որ եւ Այնթապ (Անթէպ) քաղաքի բարբառային միաւորները ունեն հնչիւնաքերականական ընդհանուր դժեր, թէեւ Այնթապի բարբառային տարրերակում, նկատելի են կիլիկիայի, Սարբերդի, Երզնկայի, Տիգրանակերտի բարբառներից անցած շատ ձեւեր, քանի որ այն դարերը շարունակ գտնուել է բարբառային նոր միջավայրում: Ձգալի թիւ են կազմում թուրքերէնից անցած բառերը, անգամ մասնիկները:

Չնայած դրան, եզրակացութիւնը մնում է մէկը՝ Այնթապ քաղաքը հիմնել են Անթապ գաւառից արտագաղթած հայ բնակիչները, որոնք՝ ի պատիւ իրենց հայրենի երկրի, այն կոչել են Այնթապ: Դա ապացուցւում է ոչ միայն պատմական աղբիւրներում եղած կողմնակի ակնարկներով<sup>11</sup>, այլեւ բարբառային ու բանահիւսական բազմաթիւ փաստերով, որի մասին կը խօսուի մեր սոյն աշխատութեան յաջորդ գլուխներում:

Այնթապի պատմութեան ուսումնասիրողները կարեւոր են համարել տալ նաեւ այն տեղանունան ստուգաբանութիւնը, եւ դրա շուրջը եղել են ու դեռ շարունակուում են հրապարակ գալ տարբեր, երբեմն նաեւ խիստ իրարամերժ մեկնութիւններ ու կարծիքներ:

Առաջին անգամ Անթապ տեղանունան ստուգաբանութիւնը տուել է բանահաւաք Ս. Հայկունին՝ իր «Բագրեւանդ Ջրարաշխ Գաւառ» արժէքաւոր աշխատութեան մէջ, սակայն, չզիտես ինչու, հետագայ ուսումնասիրողները ոչ միայն չըջանցել, այլեւ մոռացութեան են մատնել նրա տուած մեկնութիւնը: Ահա նրա մեկնութիւնը. «Արածանոյ աջ ափի վրայ 12 ժամ ի հարաւ տարածուած է Անդար եւ նոյնչափ մի եւս արեւմուտս բարձրացած է մի անհարթ երկիր եւ թերեւս այս անհարթութեան պատճառով այսօր Անդար կամ Անտափ կը կոչուի, որ կը նշանակէ անտափարակ»<sup>12</sup>:

Արտաքուստ պարզունակ թուացող այս ստուգաբանութիւնն ըստ էութեան տարուած է ճիշդ սկզբունքով՝ հայկական տեղանունները նախ բացատրել հայերէնի ընձեռած հնարաւորութիւններով ու փաստերով, ապա՝ երբ բացակայում են տուեալ բառի հայկական համարժէքները, դիմել այլ լեզուների: Մասնաւորապէս՝ խօսքը վերաբերում է Անդապին, որն իրրեւ «հայացի ձեւ» ընդունել է նաեւ Բարդէն կիւլեսերեանը: Ուրեմն՝ կարծում ենք, որ Յ. Տէր-Մեղքոնեանի կողմից աւելորդ տքնանք է Այն + քապ բառերի մէջ գտնել

11. Մարկուարդը եւ Ադոնցը ապացուցել են որ Անդիաբէն (Andiabe) գտնուում է Մանազկերտի եւ Բագաւանի (Ուշ-Քիլիսա) միջեւ ընկած տարածքում եւ Դուրաղ գաւառի կեդրոն Անթափ աւանն է:

12. Ս. Հայկունի, Բագրեւանդ..., Ա. հտր., էջ 304:

արարերէն արմատներ՝ (այն «աչք», քապ «բուժում»), որից է յանդէլ բուժարար ազրիւր մեկնութեանը<sup>13</sup> :

«Հայ Այնթէպ»ի 1964 տարուան թիւ 3-ում հանդիպում ենք մի ուշադրաւ մեկնութեան, որ թարգմանաբար տպուել է Ստամբուլում լոյս տեսնող թուրքական «Վաթան» թերթից (1950 թ. Փետրուար) : Ամսադրի խմբագրութեան կարծիքով այս յօդուածի հեղինակը ծագումով պէտք է հայ լինի, որովհետեւ տալիս է բարբառային մի քանի բառերի բացատրութիւն :

Անհետաքրքիր չէ մէջբերում կատարել նրանում արուած բոլոր մեկնութիւնները .

«1. Քաղաքը իր անունը ստացած է Այնի անուն թաղաւորէ մը, որ հոն իշխած է :

«2. Բառին նախաձեւը Հանթապ է : Հան (-խան) ծանօթ բառ մըն է, քապ հաթական լեզուով կը նշանակէ հող, կալուած, որ Հան-քապ = խանին հողը, ինչ որ նախորդ ականջութիւնն ալ կը մեկնաբանէ : Իսկ թէ քապ կը նշանակէ հող, կալուած, տեղ, կընայ հաստատուիլ այլ բառով մը, որ ցարդ կը մնայ Այնթապցիներու ժողովրդական լեզուին մէջ . քապկըր կ'ըսեն հարթուած հողին :

«3. Քաղաքը իր անուշ ջուրին պատճառով կոչուած է Այն-քապ, այս պարագային Այն = աղբիւր, քապ՝ սիրուն, գեղեցիկ :

«4. Այն-քապ անունը կ'ակնարկէ իր ջուրին առատութեան, քապ պարսկերէնով կը նշանակէ կարողութիւն, ոյժ :

«5. Այնթապի մէջ արեւը այլ վայրերէ աւելի պայծառ է, ինչ որ հետեւանքն է ճերմակ քարէ շինուած այս քաղաքին մէջ արեւի ճառագայթներուն աւելի ցոլացումին : Այնթապ կոչումին մէջ Այնի = նման, պէս, քապ պարսկերէնով՝ լոյս, ջերմութիւն, որով Այնի քապ = լուսաշող, արեւաշող»<sup>14</sup> :

Այնպիսի հեղինակը ինչպէս նկատուած է, փորձել է տալ բոլոր հնարաւոր մեկնութիւնները, միայն մէկ անգամ է դիմել հայերէնին՝ քապ բառի մէջ նկատելով թապկըր-ը, որն ըստ նրա նշանակում է հարթեցուած հող :

Այո՛, բուն Ալաշկերտի խօսուածքում էլ պահպանուած է տապկիւր բառը, որ կազմուած է տապան կրող հող, հարթեցուած, ցանուած-աւարտուած արտ : Այս մեկնութիւնը համերաշխուած է Ս. Հայ-

13. Յակոբ Տէր Մելիքեան, «Այնթապ» Անունը, «Հայ Անթէպ», Դ. տարի, 1963, թիւ 1, էջ 14 :

14. Գրիգոր Պ[օղարեան], Այնթապի Անունը եւ Հնութիւնները, «Հայ Անթէպ», 1964, թիւ 3, էջ 33 :

կունու Անտապին, բայց ոչ Անդափին:

Մերժելով պարսկերէն ու արաբերէն բոլոր մեկնութիւնները, կարծում ենք, որ Անդափը, իրօք, բարդ բառ է, կազմուած է Անդ + փափափայ ձեւերից, ընդ որում՝ անդ «այնտեղ», իսկ փափափայ բառի դիմաց «նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի» մէջ նշուած է հետեւեալը. «ԱՓԱՓԱՅ, այք, այից, դ.ա. Ապառած, առապար. Սրացեալք 'ի լերինս եւ յափափայս ճեպեն անկանել փախստականք. Եզնիկ: Ափափայից՝ ձորոց եւ անձաւաց. Շիր. : Ի ծովէ մարգարիտ, յափափայից ակունք մեծամեծք, ի՛ հողոյ ոսկի: Իրբեւ մայրիք իմն թանձրախիտ, եւ ափափայք անանջք. Ոսկիփոք: Անտառախիտ մայրիք, եւ ափափայ վայրք. Լաստ. Ժդ: Ընդ լեռնակողմն անջրգի ապառած, մացառախիտ, քառաթայո, անպողոտայ, ափափայ՝ գնալով. Յհ. կթ»<sup>15</sup>:

Անդ փափափայ «այնտեղ քարքարոտ երկիր է», մեր կարծիքով, սա է բուն իմաստը, ընդ որում՝ վերջին փայ կրկնարմատը բարդութեան եւ շեշտադրութեան պատճառով ընկել է:

Իսկ թէ ինչո՞ւ է նոր քաղաք հիմնադրելիս անդ-ը դարձել այն, հաւանաբար, այս դէպքում այն գործածուել է իր նախնական ձեւով այն — «մէկ», որը գտնում ենք միայն բառի բաղադրութեան մէջ:

## ԱՅՆԹԱՊ

«Հայկական Սովետական Հանրազիտարան»ի առաջին հատորում Այնթապի մասին նշուած է հետեւեալը. «Այնթապ, Անթէպ (Թուրք. Գաղիանթէպ Gaziantep), քաղաք Թուրքիայի հարաւում, Եփրատի վտակ Սաջուրի ափին, Գաղիանթէպ վիլայէթի կեդրոնը: 160,2 հզ. բն. (1970): Երկաթուղային հանգույց: Քաղաքը կառուցուած է պողատու այգիներով շրջապատուած երեք բլուրների վրայ: Այնթապում կան տեքստիլ, կաշուէ իրերի, սպիրտ-օղու եւ օճառի արտադրութեան ձեռնարկութիւններ: Այնթապ եղել է հին բնակավայր, սակայն ազրիւրներում յիշատակում է Ժ. դարից: Խաչակիրների օրօք մտնում էր Եդեսիայի կոմսութեան մէջ: 1266-ին Կիլիկիայի Հայոց Հեթում Ա. Թաղաւորը երկու անգամ արշաւեց Այնթապի վրայ, բայց չկարողացաւ գրաւել: ԺԳ-ԺԴ. դդ. գտնուում էր եզրպտական սուլթանների գերիշխանութեան տակ: 1404-ին Այնթապը աւերեցին Լենկթեմուրի զօրքերը: 1516-ին Այնթապ ընկաւ Թուրքերի ձեռքը: ԺԸ. դ. Այնթապի շուրջը գտնուող 100-ից աւելի գիւղեր ամբողջովին

15. Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, Ա. հար., Երեւան, 1979, էջ 397:

Հայարնակ են եղել: Հետագայում օսմանեան պետութիւնը այդտեղ ընակեցրել է քրդեր, Հայերին բռնի կերպով դարձրել թրքախօս: Այն-  
թապի վիլայէթում կիսաւեր եւ կանգուն վիճակում պահպանուել են  
Հայկական բազմաթիւ հնութիւններ՝ եկեղեցիներ, վանքեր, բերդեր:

«Քսաներորդ դարի սկզբներին Այնթապ ունէր 50 հազար բնա-  
կիչ, այդ թւում մօտ 20 հազար Հայ: Հայերն զբաղուած էին առե-  
տրով եւ արհեստներով՝ մետաղամշակութեամբ, ոսկերչութեամբ,  
քարգործութեամբ: Հին ու տարածուած արհեստ էր ոստայնանկու-  
թիւնը՝ հիւսուածքեղէն պատրաստելը: Զարգացած էր ներկարարու-  
թիւնը եւ դրոշմազարդումը (դաջածոյ, տպածոյ)»<sup>16</sup>:

Այնուհետեւ նշուած է այն մասին, որ Այնթապում զարգացած  
էր ասեղնագործութիւնը, որ լաւագոյն նմոյշներ արտահանուել է ան-  
գամ Եւրոպայի եւ Ամերիկայի շուկաները: Յիշատակուած է, որ Այն-  
թապում կար վեց Հայկական եկեղեցի, որոնցից «Սբ. Աստուածածին  
մայր եկեղեցին կառուցուել է 1873-93-ին, ճարտարապետ Սարգիս  
Պալեանի կողմից: Քաղաքում կային 17 վարժարան (Վարդանեան,  
Ներսէսեան, Հայկանուշեան, եւ այլն) եւ զանազան մշակութային ըն-  
կերութիւններ (Վարդանեան, Այդինեան եւ այլն): Հայ երեխաները  
յաճախում էին նաեւ ամերիկեան միսիոներներին հիմնադրած «Կեդրո-  
նական Թուրքիոյ Գոլէճը» եւ օրիորդաց ուսումնարանը: 1886-ին  
Վարդանեան վարժարանում հրատարակուել է «Մենտոր» անունով  
հայատառ թուրքերէն կիսամսեայ հանդէսը, որ տպագրուել է Կ. Պոլ-  
սում: 1912-1915-ին գործել է Կիլիկեան ճեմարանը՝ դիշերօթիկ եւ  
ցերեկային բաժիններով:

«Ազգային ճշումների եւ բնութիւնների հետեւանքով Այնթա-  
պի հայերի մեծ մասը հայերէն չէր խօսում, սակայն 19-րդ դ. վեր-  
ջին, հայ մշակութային ընկերութիւնների եւ առանձին բարերար-  
ների կողմից հիմնադրած հայկական դպրոցների շնորհիւ, հայերէնը  
նորից խօսակցական լեզու դարձաւ հայ ընտանիքներում:

«1915-ին թուրք ջարդարարները տեղահան արեցին Այնթապի  
բազմահազար հայերին եւ քչեցին Տէր Էլ-Ջօրի անապատը: Թուրք-  
քիայի պարտութիւնից յետոյ տեղահանուած հայերի բեկորները վե-  
րադարձան Հայրենի քաղաքը: Թուրքերը նորից յարձակուեցին Այն-  
թապի վրայ: Հայերը 314 օր (1920-ի Ապրիլի 1-ից մինչեւ 1921-ի  
Փետրուարի 8) հերոսական ինքնապաշտպանական կռիւներ մղեցին

16. Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 1, Երեւան, 1974,  
էջ 346:

Թուրք ջարդարանների դէմ (տես՝ Այնթապի ինֆնապաշտպանութիւնը 1920-21)»<sup>17</sup> :

Այնթապցիները տարագրուեցին եւ բնակութիւն հաստատեցին Միրիայում, Լիրանանում, ԱՄՆ-ում, մի մասն էլ հայրենադարձուել է Սովետական Հայաստան: 1970 թ. Սեպտեմբերի 10-ի հրամանագրով Մասիսի շրջանի Թաղազիւղը վերանուանուել է Այնթապ:

Այնթապցիները 1915 թ.ի Յունիսի 20-ին Պոսթոնում (ԱՄՆ) հիմնում են առաջին «Այնթապի Ամերիկահայոց Ուսումնասիրաց Միութիւնը», որի նպատակն է եղել օգնել Այնթապի որր ու աղքատ մանուկները դաստիարակութեան եւ կրթութեան գործին: 1924 թ.ին մասնաճիւղեր են ստեղծուում Նիւ Եորքում, Շիքագոյում, Տրոյում, Փիլատելֆիայում, Տիթթոյում, 1928 թ.ին հիմնում է Լոս Անճելոսի որրախնամ ընկերութիւնը: «Այնթապի Հայրենակցական Միութիւնը» իր գործունէութեան 65 տարիների ընթացքում մեծ աշխատանք է ծաւալել ու խրախուսել է մեծ թւով այնթապցիների ներգաղթը Սովետական Հայաստան:

Ժամանակին լոյս են տեսել Գ. Սարաֆեանի խմբագրած «Պատմութիւն Անթէպի Հայոց» աշխատասիրութիւնը<sup>18</sup>, իսկ 1960 թ.ից հրատարակում է «Հայ Անթէպ» (1970 թ.ից՝ «Նոր Այնթապ») պարբերականը:

«Պատմութիւն Անթէպի Հայոց» աշխատասիրութիւնը ընդգրկուել է ոչ միայն պատմագրական, ազգագրական նիւթեր, այլեւ զգալի տեղ է յատկացուած նաեւ բանահիւսական նմոյշներին, որոնց քննութեամբ զբաղուել է Վեր. Եղիա Ս. Քասունին:

«Անթէպի Հայ Բարբառախօսութիւնը»<sup>19</sup> գրել է Եղիա Ս. Քասունին, որը լուրջ փորձ է արել տալով Այնթապի բարբառի համառօտ նկարագիրը: Գտնուած ձեռագրերից յանգել է այն եզրակացութեան, որ հայ ազգաբնակչութեան տեղաշարժը դէպի Այնթապ տեղի է ունեցել դեռեւս 1100-ական թուականներին:

Վեր. Եղիա Ս. Քասունին վկայակոչելով Գ. Պողարեանին, որ 1914-1915 թթ. գրի է առել «Յուլյակ Ձեռագրաց Այնթապու Ս. Աստուածածին եկեղեցւոյն», նշում է. «Հոս խնամքով եւ զխտականօրէն նկարագրուած 11 հատ ձեռագիրներէն՝ թիւք 1 եւ 2 միայն հին են,

17. Նոյնը, էջ 346-347:

18. Պատմութիւն Անթէպի Հայոց, Աշխատասիրեց ու հմբագրեց Գեորգ Ա. Սարաֆեան, Ա. Ե. Բ. հատորներ, Լոս Անճելոս, 1953:

19. Տես՝ Եղիա Ս. Քասունի, Անթէպի Հայոց Բարբառախօսութիւնը, «Պատմութիւն Անթէպի Հայոց», Բ. հտր., էջ 313-380:

մեր 1183 եւ 1384 թուականներով են, դժբախտաբար թիւք 3, 6 եւ 7 անծանօթ թուականներով են. մնացածները սակայն բոլորն ալ գրուած են ժէ. դարու կէսէն յետոյ — թիւ 5՝ 1656-ին, թիւ 9՝ 1658-ին, թիւ 10՝ 1659-ին, թիւ 4՝ 1673-ին, թիւ 11՝ 1674-ին եւ թիւ 8՝ 1693-ին<sup>20</sup>: Քննութեան առնելով Գ. Պողարեանի կողմից արուած դիտողութիւնները, Վեր. Եղիա Ս. Քասունին իր հերթին որոշ դիտողութիւններ է արել այդ ձեռագրերի գրութեան եւ ընդօրինակուած տարբերակների ճշգրտման հարցերում, հաշուի է առել գրաբարից կատարուած բառային ու քերականական շեղումները, ընդօրինակման վայրերի անունները, մասնաւորապէս մի ընդարձակ անդրադարձ է նուիրել 1619 թ.ին Կ. Պոլսի Այնթապի Սբ. Աստուածածին եկեղեցու կողմից պատուիրուած մի «Աւետարանի» լեզուական առանձնայատուկութիւններին, ընդգծելով, որ «...կ'երեւի թէ այդ ժամանակուան տեղակամ հայաբարբառի հարազատ ու վաւերական մէկ նմոյշը կու տայ»<sup>21</sup>, որի վերաբերեալ ասուած է հետեւեալը.

«ա) Լեզուն գրաբարախառն է, ինչպէս ակնկալելի էր. բայց՝

«բ) Հիմնապէս աշխարհաբար է, քիչ մըն ալ թրքերէն խառն արդէն:

«գ) Մեր սովորական աշխարհաբարէն զարտուղեալ յատուկութիւններ ունի. զորօրինակ՝ որոշիչ յօդը ու կամ ը չէ, այլ անշեշտ այ վերջաւորութիւն մը. այսպէս՝ գաւն'ւնայ — զանունը, ի խա'նայ — խանը. վաճառականա'ցայ — վաճառականացը, ծնողա'ցայ — ծնողացը. աղջիկա'նայ — աղջկանը, ի եւ զ նախդիրները դեռ մասամբ կը գործածուին. սպա տուեց — տուաւ, տղին — տղուն, հոգուն — հոգոյն, ոսկուն — ոսկւոյն. ոսկի մի — ոսկի մը. գնացած = գացած. թրք. Տաւալուբաքի մահեստի. Ակոր. պախի — մնացած. հացի քապախա է: Եթէ ասիկա իսկական մէկ նմոյշն է ժէ. դարուն Անթէպի մէջ խօսուած հայերէնին, կրնանք շատ նպաստաւոր գաղափար մը կազմել մեր նախնիքներու հայերէնախօսութեան վրայ»<sup>22</sup>:

Փրոֆ. Գ. Սարաֆեանի գրառած «Չարախափան» ազօթքից, ընտրելով հորա — հորը, քէօ'րա — կորը — «կարիճ», կէննաւո'րա «կճաւորը», խօթաւո'րա — խօթաւորը, դիւաքի'րա — դիւահարը, կազա'նա — գազանը, կո'ղա — գողը — ձեւերը Վեր. Եղիա Ս. Քասունին այն համոզմունքն է յայտնում, որ այդ-ը փոխարինում է ը յօդին, որը Տիգրանակերտի բարբառում դառնում է է: Այս երեւոյթը առաջին անգամ

20. Նոյնը, էջ 315:

21. Նոյնը, էջ 317:

22. Նոյնը, էջ 317-318:

նկատել է հայ մեծ լեզուարան Հ. Աճառեանը գրելով. «Քերականութեան մէջ կարեւոր կէտերն են 1. Ը յօդը դառնում է Է, ինչ. փէրա՛նէ, շո՛ւնէ, սո՛ւնէ»<sup>23</sup>: Իսկ Սուրբիայի բարբառում Ը յօդը փոխուել է ա-ի, ինչպէս «Տուցա, բերունա, բուրիքէրա՛ փիս. հացը, բերանը, պարաքերը»<sup>24</sup>:

Վեր. Եղիա Ս. Քասունին, կատարելով այս համեմատութիւնը, Այնթապի բարբառում Ը յօդի դիմաց հանդէս եկող ա մասնիկը համարում է օրինաչափ երեւոյթ, սակայն չի փորձում մեկնարանել, թէ այն հնչիւնաքերականական ինչ փոփոխութեան արդիւնք է: Նա հակամէտ է կարծելու, որ Այնթապի բարբառը միջին դերք է գրաւում Մշոյ եւ Մալաթիայի բարբառների միջեւ:

Այնուհանդերձ Եղիա Ս. Քասունին յանգում է այն եզրակացութեան, որ՝

1. Մինչեւ 1600 թուականը Այնթապի բարբառի մասին չկան բաւարար փաստեր ու վկայութիւններ. «զննութիւնը երեւան բերաւ թէ ԺԷ. դարուն Այնթէպ կը խօսուէր եւ մասամբ գրուած ալ է բնիկ հայաբարբառ մը որ իր ձայնարանութեամբ ու քերականական ձեւերովը ամենէն աւելի նմանութիւններ ունէր Տիգրանակերտի քարքառըսուածին հետ:

2. «...Մեր այլուստ քաղած պատմական տեղեկութեանց համաձայն՝ մօտաւորապէս 1700 թուականէն վերջը դէպի Այնթէպ հայոց դաղթը տեղի ունեցած է առաւելապէս հիւսիսէն, վերին Եփրատի անմիջապէս արեւմտեան կողմը գտնուող հայաբնակ քաղաքներէն. մինչդեռ Տիգրանակերտէ եւ անոր բարբառին տիրած տեղերէն Հայոց արտագաղթի հոսանքը դարձած է յուէտ դէպի Հալէպ»<sup>25</sup>:

Վեր. Եղիա Ս. Քասունին քննութեան է առել իր ձեռքի տակ դեռեւս ձեռագիր վիճակում գտնուող Փրոֆ. Գ. Սարաֆեանի «Կորսուած Գաւառաբարբառ մը», Յ. Եաղուպեանի «Հայ Բառեր եւ Ազգագրական Նօթեր Այնթապի Տաճկախօս Հայոց Մէջ» (1920), Ա. Մուրադեանի «Փշուրներ Այնթապի Գաւառաբարբառէն», ինչպէս նաեւ Բ. Կիւրեսերեանի մանր ուսումնասիրութիւններն ու գրառումները, որոնց հիման վրայ կազմել է բառացանկը:

Այդ բոլոր նիւթերը համեմատել է Մարաշի, Զէյթունի, Հա-

23. Հ. Աճառեան, Հայոց Լեզուի Պատմութիւն, Բ. մաս, Երեւան, 1951, էջ 342:

24. Նոյնը, էջ 348:

25. Եղիա Ս. Քասունի, Անթէպի Հայոց Բարբառախօսութիւնը, «Պատմութիւն Անթէպի Հայոց», Բ. հոր., էջ 321-322:

ճընի, Միսի բարբառների ու խօսուածքների հետ եւ նկատել է, որ «Անթէպի կորսուած Հայերէնը չէր պատկաներ Կիլիկիոյ եւ հիւսիսային Մուրիոյ լեռնային հայաբարբառներու դասակարգին. որովհետեւ անոնց կրած ձայնաորակներու փոփոխումը չի ներկայացներ: Միայն դաշտային Միս քաղաքի նմանապէս կորսուած հայաբարբառը, հակառակ մասամբ Հաճընի դաւառարբառէն ազդուած ըլլալուն, բաւական նմանութիւններ կը ներկայացնէ Այնթէպիին»<sup>26</sup>:

Այնուհետեւ նա եղած «մնացորդաց»ի վրայ փորձել է տալ հընչիւնական ու քերականական տարբերութիւնները.

### 1. Հնչիւնական

ա) Բ, գ, դ, ջ ձայնեղ բաղաձայնները բառասկզբում ապաձայնեղանում են՝ դառնալով պ, կ, տ, ճ, ինչպէս՝ բարեկամ – պարեկամ, դադաղ – տակաղ, գլուխ – կլուխ, ջուր – փուր:

բ) Բաղաձայնից յետոյ եւ միջձայնաւորային դիրքերում, ինչպէս նկատուում է բերուած օրինակներից, Բ, գ, դ, ջ ձայնեղ բաղաձայնները պահպանուում են: Բացառութիւն է կազմում տաշտ բառը, որ դարձել է քէշտ/քէշթ: Ի հարկէ, այստեղ փոփոխուել են բոլոր հնչիւնները: Մշոյ բարբառի Խութի տարբերակում մեր կողմից գրանցուած են նման վիճակի առկայութիւն, երբ բառն արտասանուում է նախադասութիւնից դուրս, բառասկզբի Բ, գ, դ, ձ, ջ ձայնեղ բաղաձայնները պահպանուում են, իսկ նախադասութեան մէջ, երկուտք պարտադիր շեշտադրութիւնը ստիպում է, որ դրանք ենթարկուեն հնչիւնական ներքին օրէնքին: Հետեւապէս, չի կարելի ընդունել, որ Այնթապի բարբառում առաջնային շարքի Բ, գ, դ, ջ հընչիւնները ապաձայնեղանում են, որովհետեւ նման դէպքում փոփոխութիւն պէտք է կրեն նաեւ միւս հնչիւնները, ինչպէս քեշտ/քէշտ բառաձեւերում են տեղի ունեցել:

2. Բառասկզբի յէ եւ Վօ (ւո)–ն դառնում են է, օ:

3. Ե. Ս. Քասունին նկատել է. «Բառասկզբի յ գիրը յաճախ չի հնչուիր, մասնաւորապէս յատուկ անուններու մէջ. Ակոր, Արթին, Օվանէս եւ այլն:

«Այս նշանները բաւական են մեզ համոզելու որ Անթէպի կորսուած հայերէնն իր ծագմամբ կապ ունի արեւելիքի, բուն Հայաստանի հետ, եւ ոչ թէ լեռնային կամ դաշտային Կիլիկիոյ հետ»<sup>27</sup>:

Անձնանունների նման փոփոխութիւններ առկայ են Ղարաբաղի, Գորիսի բարբառներում, իսկ Մուշ–Տիզրանակերտ կամ Ալաշկերտ–

26. Նոյնը, էջ 324:

27. Նոյնը, էջ 325:

Անթապոմ չի արձանագրուած նման փաստ՝ Յակոբի դիմաց առկայ է Հագօ, Յարութիւն – Հարթէն, Յովհաննէս – Հօլօ, Օհաւն :

4. Միջձայնաւորային դիրքերում հ, կ, ղ, վ եւ նման հնչիւնները անկում են ապրում, ըստ Ե. Ս. Քասունու՝ թուրքերէնի ազդեցութեան տակ (օրինակներ չեն բերուած) :

5. Ժ բաղաձայնը դառնում է ն (համապատասխան օրինակներ չկան), ծ > զ, ձ, ց > ս :

6. Ա ձայնաւորը յաճախ հնչւում է ինչպէս բաց ա :

7. Ե. Ս. Քասունին հանգամանօրէն չի բնութագրում քերականական յատկանիշները եւ եղած դրսեւորումները կապում է թուրքերէնի ազդեցութեան հետ<sup>28</sup> :

Մի շարք մասնիկներ, որոնք իրօք թուրքերէն են եւ նորագոյացումներ, սակայն քերականական կառուցուածքը, հոլովական ու բայական մասնիկները բնորոշ են միայն հայերէնի արեւմտեան ճիւղի բարբառներին :

Ե. Ս. Քասունին դուրս է դրել բարբառային ձեւերը, որոնք առկայ են այնթապցի գրիչների ձեռքով ընդօրինակուած ձեռագիր մատենաների յիշատակարաններում եւ ապա՝ բանահիւսական որոշ նմոյշների հիման վրայ, կազմել է համապատասխան բառգրքոյիլը :

Եղած փաստերի հիման վրայ նկատել է հնչիւնական մի շարք տարբերութիւններ, հրատարակել է իր ձեռքի տակ եղած բարբառային նմոյշները եւ տուել մի շարք բառերի ու արտայայտութիւնների մեկնարանութիւնները, առաջարկել դեռեւս չմեկնուած որոշ բառերի բացատրութիւններ : Սակայն սրանով, ի հարկէ, չի աւարտուել եղած նիւթերի քննութիւնը : Այս ուղղութեամբ նկատուող թերին ու բացը լրացնելու համար հարկ ենք համարում կրկին անդրադառնալ Եղիա Ս. Քասունիի յիշատակած աղբիւրներին, կատարել բանասիրական որոշ ճշգրտումներ եւ, այդ ամէնը ներկայացնելով, վերականգնել Այնթապի բարբառի շատ ձեւեր, զգալի փաստեր վերցնելով Ալաշկերտի բարբառի բուն Ալաշկերտի խօսուածքից :

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

«Պատմութիւն Անթէպի Հայոց» ստուարածաւալ աշխատութեան Բ. հատորում տեղ են գտել Գ. Սարաֆեանի եւ Յ. Եղուպեանի գրառած բանահիւսական պատմոգրերը<sup>29</sup>, որոնք միաժամանակ լի-

28. Տես՝ նոյնը, էջ 325–326 :

29. Տես՝ նոյնը, էջ 328–336 :

նելով Այնթապի բարբառի հազուագիւտ նմոշներ, լուրջ հետաքրքրութիւններ են ներկայացնում տուեալ բարբառի հնչիւնական, քերականական եւ բառային մի շարք զուգարանութիւնների դրսեւորումների ճշգրտման համար:

Ե. Ս. Քասունին դրանք հրապարակել է եւ կցել որոշ բառերի ու արտայայտութիւնների բացատրութիւններ, մեկնութիւններ: Այս մեկնութիւնները, թէեւ ուշադրաւ, սակայն դեռեւս վերջնական չեն եւ կարօտ են նոր բացատրութիւնների, ճշգրտումների ու լրացումների:

Եւ քանի որ Այնթապի եւ Հին Անթապի բարբառները մենք համարում ենք բխած նոյն արմատից, ապա իրբեւ համեմատութեան եզր եւ ճշգրտման ու լրացման հիմնական աղբյւրը ընդունում ենք դեռեւս կենդանի բուն Ալաշկերտի խօսուածքը, որի հնչիւնաքերական յատկանիշները, հարուստ բառապաշարը կարող են լրացնել մնացած բացն ու թերին:

Հենց այս ելակէտով էլ այժմ փորձենք մեկնարանել բոլոր այն բառերն ու արտայայտութիւնները, որոնք Ե. Ս. Քասունին կամ համարել է անհասկանալի կամ տուել է մօտաւոր հաշուարկներով, թէականօրէն:

Իր մեկնութեան մէջ աւելի հեռու է գնում Մանուէլ Ս. Քասունին, որը բոլորովին վերջերս իր «Այնթապի Կորսուած Բարբառին Հետքերով» յօդուածում, անդրադառնալով «Անտուֆը կրտուֆ է, պո՛ւյսա այսօր տըֆով է» չվերծանուած դարձուածքը բացատրում է այսպէս՝ «Տուֆը մեր զիտցած Տէֆ (= դափ) նուազարանն է. Կտուֆը պիտի ըլլայ կրտուֆէ («կը դափէ»), այսօր ետսամուտ «գրական» բառն է, հաւանաբար ասածը կը դառնայ «Անտուֆ կը տուֆէ, պո՛ւյսա տըֆով է» (Առանց դափի կը նուագէ, մինչդեռ դափ ունի)»:

Ա. «Անտուֆ կրտուֆ է, պո՛ւյսա այսօր տըֆով է» (Ե. Ս. Քասունին այս ստոյթը համարում է «անհասկանալի» դարձած ասութիւն մը)<sup>30</sup>:

Դրա դիմաց առաջարկում ենք բուն Ալաշկերտի (Անթապ) խօսուածքի մեր կողմից դրի առնուած նմոշը.

Խանդոխ<sup>31</sup> (Հանդով) կըդով ա, բուս (ծիլ) մըն ուր քըպով ա:

30. Նոյնը, էջ 328:

31. Ըստ Ղ. Ալիշանի՝ Ատոլ (Խանդոխ). Գեոմաթիմօրի (փաքոք) նման մանր կռնդէգ է քաղցրահամ ուտելի եւ գտնուի ի կարին եւ այլ տեղանք. Շիրակայ կողմերը խանտոզ գանուանեն գայն: Տես՝ Հայ-Բուսակ, Վեներիկ, 1895, էջ 53:

(Խանդոխը կորեզով է՝ ծիլն էլ մէջը) :

Տեղի են ունեցել հետեւեալ փոփոխութիւնները .

ա) Բառասկզբի Հ-ն անկում է ապրել, ինչպէս ճիշդ նկատել է Ե. Ս. Քասունին, ինչպէս՝ Խանդոխ (Հանդով) - անտուֆ :

բ) Առաջնային շարքի բ, գ, դ, ձ, ջ բաղաձայններից յետոյ, փակ վանկում ռ - ու, ինչպէս՝ Խանդոխ - անտուֆ (Այնթ.), դոհար - դույար, դուար, մորուք - մուրուք (Ալշ.) :

դ) Ս > տ. (հ) անդոխ-անդուֆ, հաւանարար՝ բառասկզբի Խ-ն ինչ-որ ժամանակ եղել է ղ կամ հ, արժատը հանդ, անդ, Խանդ, կամ աւելի ճիշդ՝ տալիս է Հ. Աճառեանը «Խանդաղ «անծանօթ մի բոյս է»՝ կամրկ. ունի միայն Հ Բուս. § 981. Թերեւս նոյն է Մշ. Խանտող բուսանուան հետ»<sup>32</sup> :

դ) Պ > Փ, թըլով՝ վերջին վ-ի ազդեցութեան տակ դարձել է Փ :

Բ. «Աղուենի քանի քանի,

Ես կ'ուզեմ հազուանի :

Դաէն թուէս մարմինէս

Տօն ֆոտուլը ձէն տուաւ .—

5 Մեր Մայրամ, քո՞ւն էս մի արթուն էս մի :

— Ոչ քուն էմ, ոչ արթուն էմ,

Առաւտունը ժամն էմ :

Առաւտուն դուրս կ'ելլաս,

Հինգ զօրաւոր սուրբ մը տեսայ,

10 Սուրբ մը տեսայ աղորացած :

Ըսազանքմ Սուրբ Մարգիս .

Որդակ մ'ունիմ, Սուրբ Մարտրոս :

— Ով որ հինգ օր պաքս բռնայնա,

Հոգով սրբով բարեխօս բննամ .

15 Ով որ պաքսըս չի բռնայնա,

Կ'ելլամ լերին գլո՛ւխա կը ձգեմ :

— Սեւ Սատանային գլո՛ւխա թըքեմ» :

(Գէորդ Սարաֆեանի տետրակէն)<sup>33</sup>

Ե. Ս. Քասունին այս, ինչպէս ինքն է կոչում՝ «ոտանաւորին», կցել է հետեւեալ ծանօթագրութիւնը .

«Այս յոյժ հետաքրքրական ոտանաւորի առաջին տողին մէջ՝

32. Հ. Անտեան, Հայերէն Արժատական Բառարան, Բ. հտր., Երեւան, 1973, էջ 331 :

33. Ե. Ս. Քասունի, Անթէպի Հայոց Բարբառախօսութիւնը, «Պատմութիւն Անթէպի Հայոց», Բ. հտր., էջ 329 :

ազուեցնի բառը կրնայ ազուուր կամ ազաւնի նշանակել: Երրորդ ու չորրորդ տողերն ինծի անհասկնալի են: Ութերորդ տողին մէջ կ'ելլաւ բառը ելած պիտի ըլլայ, եւ իններորդ տողին մէջ՝ հիմզ բառը հենց ուղղագրելու է, որ իսկոյն կամ յանկարծ կը նշանակէ: Տասներորդ տողին մէջ՝ ազորացած = աղուորացած<sup>34</sup>: 11-րդ տողին մէջ՝ ըսագանքմ թերեւս բայ մը կը բովանդակէ՝ կատ. եզ. Ս. դէմքով — «Ըսայ (ըսի)՝ գանգըմ (կարծեմ)» իմաստով: Ս. Սարգիսի պահքին համար՝ տես Ռ. Զարդարեանի «Պուտ մը ջուր» շահեկան պատմուածքը: Ուտանաւորիս վերջին երկու տողերուն մէջ կրկնուած գլուխ բառը՝ նորէն իմ կարծիքովս՝ գլուխը ըսելուն տեղ է. իսկ 13-րդ եւ 15-րդ տողերուն վերջերը՝ նա սովորաբար նէ հնչուած պայմանական կամ թէական մասնիկն է, թրքերէն իսէ բառին համազօր»<sup>34</sup>:

Եւ այսքան միայն:

Անհրաժեշտ է նշել, որ Ե. Ս. Քասունիի տուած բացատրութիւնները հետաքրքրական են, սակայն նրանցից մի քանիսը թերի են ու ոչ հաւաստի, միաժամանակ նկատուում է, որ այս «ուտանաւորը» աղճատուած է որոշ տողերի բացակայութեան պատճառով: Այն չունի ժողովրդական բանահիւսութեան կառուցուածքային այն կուռութիւնը, որ գտնուում ենք նման բնոյթի ստեղծագործութիւնների մէջ:

Մեր կարծիքով՝ ազուեցնի կը նշանակի աղուորենի «դեղեցիկ», հագուեցնի — «հագուագիւտ», Դաէն քուէս մարմինէս. Դաէն պէտք է ուղղել դահ (մինչամուսնական եռանդուն շրջանը) դահնալ — քուես պէտք է սրբագրել («թոֆնեց, թովնեց»):

Դաէն պէտք է ուղղել դահ որ «կը նշանակէ մատաղ (ամուսնական) տարիքը անցուցած աղջիկ»<sup>35</sup>, ըստ Ե. Ս. Քասունիի, որն ընդունուում է նաեւ մեր կողմից: Թոուէս, թովնեց, թոֆնեց «դուրս եկաւ», կը ստացուի՝ դահէն քովեց «դուրս եկաւ, լցրեց, լրացրեց իրենը» մարմինէս «մարմնիցս» (այստեղ կայ յանգաւորման խախտում) :

Տօն «մաքրուած, լուացուած» Փոտուլը («հմմտ. խորթլամադ ըստ Ե. Ս. Քասունիի՝ «քունէն կէս արթննալ եւ յանկարծ ելլել»)՝<sup>36</sup>: Հ. Աճառեանը նշել է դրա մէկ ձեւը՝ «Սորթնօղ «արթնասէր» ունի միայն Բառ երեմ. էջ 145»<sup>37</sup>:

Եւ իրօք, յաջորդող տողերը տրամաբանօրէն կապուում են նա-

34. Նոյնը:

35. Նոյնը, էջ 343:

36. Նոյնը, էջ 353:

37. Հ. Աճառեան, Հայերէն Արամատական Բառարան, Բ. հար., էջ 408:

խորդ մտքի հետ, ինչպէս՝

- Մեր Մայրամ, քո՞ւն էս մի, արթուն էս մի :
- Ոչ քուն էմ, ոչ արթուն էմ,  
Սոսաւտուն դուրս կ'ելլաս (ելած)  
Հինդ զօրաւոր սուրբ մը տեսա,  
Սուրբ մը տեսա ազուրագած,  
Ըսագանըմ («ասա, զայն/ան/իմ») Սուրբ Սարգիս .  
Որդակ մ'ունիմ, Սուրբ Մարտոս :  
Ով որ հինդ օր պաքս բռնայնա («Բռնանա, Ալլ .  
«եթէ պահի») :

Այս բացատրութիւնները ճիշդ են :

### 3. Շարքուան օրերու սովորոյթի մասին

«Էրկիշարթի, շարթի, շարթի,  
Իրեքշարթի անոր կապտի .  
Չորեքշարթի վըլացք կ'էնէ,  
Հինդշարթի պաղնիք կացէ .  
Ուրբաթը պախճան ծալլիստէ .  
Շարաթը տուն հաւքիտեսցէ .  
Կիրակի օ՞վ պան ընէ որ էս պան ընեմ,  
Գըլուխս քար կ'ըննայ . . .»

(Գէորդ Սարաֆեանի տետրակէն)<sup>38</sup>

Ե. Ս. Քասունին այս տողերի առիթով գրում է. «Հոս (տող 2) կապտի՝ թերեւս կապուի կամ նմանի պիտի նշանակէ. (տող 3) կ'էնէ = կ'այնէ, կ'ընէ (տող 4) կացէ = դացեր է, եւ կամ կրնայինք կ'եհէ ուղղագրել, որ խիզանցուց բարբառով «կ'երթայ» ըսել է. (տես՝ Սրուանձտեանց, Մանանա, էջ 200) : Ծալլիստէ (ծուլեալ նստի?) եւ հաւքիտեսցէ բայերը կարծես թէ հին գրաբար ձեւեր կը կրեն : Կըննայ՝ թերեւս կ'ընկնայ (կ'իյնայ) բառն է»<sup>39</sup> :

«Էրկիշարթի, շարթի, շարթի» այս արտայայտութեան մէջ շարթի, շարթի ըզձական եղանակի բայ է, որ կը նշանակէ թող սկսուի շարթը, թող շարթի, իսկ 2-րդ տողի «Իրեքշարթի անոր կապտի»՝ տողը պէտք է հասկանալ երկուշարթուան կապ + տող, նրան հետեւող, նրա նման, իսկ մնացածը ընդունել այնպէս, ինչպէս մեկնաբանել է Ե. Ս. Քասունին :

38. Ե. Ս. Քասունի, Անթէպի Հայոց Բարբառաբանութիւնը, «Պատմութիւն Անթէպի Հայոց», Բ. հտր., էջ 329-330 :

39. Նոյնը, էջ 330 :

- «Թագաւոր, Թագաւոր,  
Նոր Թագաւոր,  
Կանանչ ու կարմիր  
Ձահաւոր (զրահաւոր?)»
5. Նոր կասէր տղայ եկաւ,  
Աստուածէն ի՞նչ խապար —  
Մահան հարստութիւն,  
Հացուն էփնութիւն,  
Մեղաց ի թողութիւն,  
Ոգւոյն արքայութիւն»<sup>40</sup>:

Ե. Ս. Քասունին առջարկել է գահաւոր բառը սրբագրել զրահաւոր, որը ճիշդ է, իսկ «Նոր կասէր տղայ եկաւ» արտայայտութեան կասէր բառը փոխարինել հարսին ձեւով՝ ոչնչով չի հիմնաւորուում, այլ, ընդհակառակն, բնագրին պէտք է հարազատ մնալ, 7-րդ տողի մահան, որ օգտագործուած է մահուան իմաստով, ի դուր էլ փոխարինել է մանկանով եւ այն պատճառարանութեամբ՝ «այն ատեն թերեւս նոր հարսին անդրանիկ որդիի ծննդեան վերաբերի»<sup>41</sup>:

«Մահան հարստութիւն» արտայայտութիւնը, իրրեւ մաղթանք, ունի շատ ղիպուկ կիրառութիւն, այդ նշանակում է, որ մահ քիչ լինի, ինչպէս վերջերս խաստուրցիների միջավայրում ստուգելով այս արտայայտութիւնը՝ հանդիպեցինք դրա տարրերակներից մէկին.

խաստուր

Այնքապ

Աչխրկին խախանդուտեն,  
Ձահելներին օխչուտեն,  
Մահուան թանկուտեն,  
Հացին էփնուտեն:

«Մահան հարստութիւն,  
Հացուն էփնութիւն,  
Մեղաց ի թողութիւն,  
Ոգւոյն արքայութիւն»<sup>42</sup>:

#### 4. Մանկական խաղօրօք

«Ծօր, ճօր, ճօր մամա,  
Ծօրիկ մամա, ճօր մամա.  
Ծօրիկ մաման ժամ երթայ.  
Կորկոտ ապուր պիշ ըննայ,  
Եղը վըրան խըշ ըննա,

40. Նոյնը, էջ 330-331:

41. Նոյնը, էջ 331:

42. Նոյնը:

(Գեղամ) ուտէ, ճօշ ըննայ,  
 Լօփ, լօփ աշըննա :  
 (Նաղուպեան, էջ 87)

«Ճօր, ճօր ճօր մամա,  
 Ել, մաքային (մօրաքրոջ?)  
 տուն գընա .

Տես թէ նա ի՛նչ է եփեր,  
 Կեր, կեր, կշտացիր,  
 Դըզալ մըն առ, փախիր :

Ճօր, ճօր, ճօր մանի  
 Կարմիր խնձոր կըլմանի .  
 Թագաւորին տըղան

Մեր աղջըկան խընամի» :  
 (Գ. Սարաֆեանի տետրակէն)<sup>43</sup>

Յ. Նաղուպեանի եւ Գ. Սարաֆեանի գրառումների մէջ թերեւս այս երկունն են ներկայացուած ամբողջական, որով էլ գրանք ունեն ճանաչողական մեծ արժէք: Երգողը մայրն է, որն անհամբեր սպասում է իր որդու մեծանալուն, մայրական կրծքի կաթից դէպի հայրական հացը անցնելուն:

Ե. Ս. Քասունին նկատում է. «Այս երգը կ'ըսեն խանձարուրէն նոր հանուած երեխային բազուկները վեր վար, ներս դուրս շարժելով, իբր օգտակար մարմնամարզ մը»<sup>44</sup>:

Բանասիրական մի երկու ուշադրաւ դիտողութիւններ անելով հանդերձ, սակայն սխալ է մեկնել հետեւեալ բառերը. պիշ «եփ», քօշ «կուշտ», աշըննա (թրք. աշըմագ) «կը նշանակէ լափէ, կլլէ»<sup>45</sup>:

Չընդունելով Ե. Ս. Քասունիի տուած մեկնութիւնները, առաջարկում ենք հետեւեալը.

ա) պիշ (Այնթ.) բիշի (Ալշ.) «իւղարլիթ» եւ այդ տողը սրբագրել՝ «Կորկոտ, ապուր, բիշի ըննա», — երեք ճաշատեսակներն էլ ասուել է թուարկումով.

բ) քօշ (չօջք) «չորեքթաթ», որ պէտք է հասկանալ մինչեւ քայլելը չորս թաթերի վրայ դնալ. Ալաշկերտի, խաստուրցիների միջավայրում մինչ օրս պահպանուած է չօջք ձեւը, որն առաջացել է չօրեթաթ բարդութեան համառոտումով՝ չօրեթ, որից էլ չօջք: Կայ

43. Նոյնը, էջ 332:

44. Նոյնը:

45. Նոյնը:

և ճօշղալ «խօսել, բամբասել» իմաստով, որն այս դէպքում չի կարելի գործածել, յատկապէս նօշ ընկա յարադրական կազմութեամբ.

դ) աշրնկա — բարդ բառ է, կազմուած է անուշ — ըննա, ընդ որում՝ անուշ բառից ընկել է բառամիջի նա հնչիւնակապակցութիւնը՝ անըշ ընկա և ծնդ է հասել աղաւաղուած դրառումը: Եւ տրամաբանական է դառնում, երբ Այնթապ (Գեղամ) ուտէ, ճօշ ըննա, Լօփ, Լօփ աշրնկա (Լոփ — Լուպ «բուռ» բուն Ալաշկերտի խօսուածքով):

Ալշ. հաստուր՝

Գեղամ ուղա, չօշք էնա

Լօփ, Լօփ անուշ էնա.

(Գեղամ ուտի, չոչ անի,

Բուռ-բուռ անուշ անի):

Ինչպէս նկատուեց, յիշեալ բանահիւսական նմոյշներում Ե. Ս. Քասունիի նկատած թուրքերէն բառերը իրենց չարգարացրին, որովհետեւ դրանք առկայ են Ալաշկերտի (Այնթապ) բարբառում, հայրմատ են և ճիշդ են արտացոլում խաղիկի հերոսուհու՝ մօր երազանքը, նրա սիրոյ և գորովանքի այն բոլոր պահերը, որ կապուած են որդու մեծանալու հետ: Սա իւրայայտուկ օրօրոցային երգ է:

Օրհնութիւնների և անէծքների շարքում կան ուշադրաւ տողեր, որոնց տարրերակները դառնում ենք Ալաշկերտի Պաստուրի բառ ու բանում, ինչպէս՝

Այնթապ

հաստուր

1. Անմեղիսի կեսիր:

1. Ամելս կեցի. անմեղ կեցի:

2. Կրակ թափի գլխուդ:

2. Երակ թափի գըլխուդ:

3. Չարն ո՛ր չար սատանա,

3. Չարն օր չար սաղանա,

Ակնկոր չար սատանա:

Հաճկ հանող չար սաղանա:

4. Միամիտն սիրտը կատարեալ:

4. Միամիտ մարդու սիրտը

պարզ ա:

Շատ մաղթանքներում, անէծքներում, ասացուածքներում, յախուռն թափով գործածուել են թուրքերէն բառեր ու արտայայտութիւններ, որոնք նախադասութեան մէջ գործածուել են մեծ մասամբ գոյականի կամ բայի իմաստներով: Մեր նպատակից դուրս է տալ այդ բառերի քննութիւնը, սակայն հարկ ենք համարում նշել, որ դրանք Այնթապի բարբառն են ներթափանցել աւելի ուշ շրջանում, երբ մայրենի խօսուածքը կամաց-կամաց տեղի էր տուել և արդէն ազդեցութեան ոլորտն է ընդլայնել հայերէն-թուրքերէն երկլեզուեան խօսքը:

Գէորգ Սարաֆեանը գրի է առել այդպիսի նիւթեր եւս .

«Տիւնեայ խաղաղութիւն, (աշխարհին խաղաղութիւն) :  
 Խասթէլէրէ բժշկութիւն, (հիւանդներին բժշկութիւն) :  
 Իշլէրիմիդէ յաջողութիւն, (զործներիս յաջողութիւն) :  
 Կիւնասչլարըմըզա թողութիւն»<sup>46</sup> (մեղքերիս թողութիւն) :

Կամ՝

«Կրողըն պատառնա կիտէսին : (զրոզի պատառը դառնաս) :  
 Անդունդա կիտէսին, (անդունդը դնաս) :  
 Մրեմ պաշընա»<sup>47</sup> (մրեմ գլուխդ) եւ այլն :

Այս խօսքերում ուշագրաւ դիրք ու քերականական դրսեւորում ունեն յատկապէս հայերէն բառերը :

Բերում՝ փաստերը վկայում են, որ Այնթապի բարբառային միւտորում գեոեւս մինչեւ 1800-ական թուականները պահպանուել են հայերէն բառեր եւ քերականական մի շարք հետաքրքրական ձեւեր :

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՈՒԱԾ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ըստ Բարդէն Կիլիկեանի եւ Եղիա Ս. Քասունիի վկայութեան՝ Այնթապի Սր. Աստուածածին եկեղեցու, Կիլիկեան ձեմարանի, Եկեղեցասիրաց Ընկերութեան եւ այլ գրասպանոցներում մինչեւ 1915 թուականը պահպանուել են 47 ձեռագիր մատեններ եւ 163 տպագիր հին ու նոր արժէքաւոր գրքեր, որոնք Բարդէն եպիսկոպոսի կարգադրութեամբ 1923 թ.ին փոխադրուած են Երուսաղէմի Սր. Յակոբեան վանքին մատենադարանը<sup>48</sup> :

Բարերախտարար Այնթապի Կիլիկեան ձեմարանի սան Գ. Պողարեանը 1914-1915 թուականներին կազմել է զբանց ձեռագրացուցակը եւ տուել իւրաքանչիւր գրչապրի մատենագիտութիւնը՝ հրապարակելով նաեւ տարբեր ժամանակների գրիչների թողած յիշատակարանները, որոնք, ունենալով պատմաճանաչողական մի շարք արժանիքներ, իրենց մէջ պահպանուել են նաեւ Այնթապի բարբառի որոշ գծեր :

46. Նոյնը, էջ 334 :

47. Նոյնը, էջ 335 :

48. Տես՝ Գրիգոր Պողարեան, Այնթապի Հայերէն Գրչագիրներ, «Պատմութիւն Անթապի Հայոց», Բ. հար., էջ 414, ծան.\*):

Ե. Ս. Քասունին նշում է, որ «Լուսահոգի բանասերը, Բարգէն Եպիսկ. Կիւլեսերեան, հազիւ չորս յիշատակարան կը գտնէ, որոնք իրենց վրայ Անթէպի տեղական հայաբարբառին զրոշմը կրել կը թուին»<sup>49</sup>։ Նա, չբաւարարուելով այս յոյժ կարեւոր փաստարկման հիմնաւորմամբ, պատմաբանասիրական մի ծաւալուն ակնարկներով ներկայացրել է Այնթապի զրչագիր մատեաններում եւ յիշատակարաններում վկայուած դէպքերն ու իրադարձութիւնները, լեզուաբերականական իրողութիւնները։

Այնթապի զրչագիր մատեանների յիշատակարանները՝ Բ. Կիւլեսերեանի, Գ. Պողարեանի, Ե. Ս. Քասունու պատմաբանասիրական քննութիւնը յանդում է հետեւեալին. ա) ճշդուել է, թէ ո՞ր դարից սկսած Այնթապում խօսել են մի ինքնատիպ բարբառով, որ նման չի եղել ոչ Կիլիկիայի, ոչ Տիգրանակերտի եւ ոչ էլ մի այլ բարբառի, բ) Այնթապի հայ ազգաբնակչութիւնը վերջին անգամ արտագաղթել է 1700-ական թուականներին, գ) 1800-ական թուականներին հայերէնը կամաց-կամաց տեղի է տուել թուրքերէնին եւ պահպանուել են բանահիւսական երկրեզուեան (հայերէն-թուրքերէն) նմոյշներ։

Սակայն բերուած որոշ փաստերը, բարբառային բառերն ու արտայայտութիւնները, որոնք վկայուած են յիշատակարաններում, սխալ եզրակացութիւնների տեղիք են տուել, ինչպէս՝ «Բառասկզբի 3 զէրը յաճախ չի հնչուիր, մասնաւորապէս յատուկ անուններու մէջ, Ակոր, Արթին, Օվաննէս եւ այլն։

«Այս նշանները բաւական են մեզ համոզելու որ Անթէպի կորսուած հայերէնն իր ծագմամբ կապ ունէր արեւելքի, բուն Հայաստանի հետ, եւ ոչ թէ լեռնային կամ դաշտային Կիլիկիոյ հետ»<sup>50</sup>։

Այս փաստերը եւ նրանցից բխող եզրակացութիւնը ճշգրտելու համար հարկ համարեցինք քննութեան առնել Այնթապի ձեռագիր մատեանների յիշատակարանները, մանաւանդ, որ նրանց մէջ օգտագործուած բառերը Եղիա Ս. Քասունին եւ միւսները համարել են Այնթապի բարբառային բառեր եւ զրանցով կազմել բառարաններ։

1. ձառքնտիր (Սր. Աստուածածին եկեղեցի), զրուել է 1384 (ՊԼԳ) թուականին (գրիչներ՝ Յովհաննէս Երէց, որի մահից յետոյ Մարկոս Երէց), պարունակում է 136 ճառ՝ չունի գլխաւոր յիշատակարանը, հրատարակուել է 1802 թ.ին։

Ուշագրութեան է արժանի երկրորդ յիշատակարանը, որ

49. Ե. Ս. Քասունի, Անթէպի Հայոց Բարբառախօսութիւնը, «Պատմութիւն Անթէպի Հայոց», Բ. հտր., էջ 314։

50. Նայնը, էջ 325։

գրուել է 1691 թուականին, գրիչներ Սարգիսի եւ Ներսէսի կողմից :

Շարագրանքի ամբողջական ոգին, շարահիւսական կառուցումածքը աշխարհաբար է՝ միաձուլուած գրարարեան բառերի ու արտայայտութիւնների հետ, ինչպէս՝

«Հազար հարիւր քառասուն թուին (1691)

Չորս վարդապետ յԱնթապ եկին,

Ի ժամանակս չոր իշխանին,

Որ մականուամբ չրախ ասին»<sup>51</sup> :

Եղիա Ս. Քասունին նկատում է, որ «քերթուածս նշանակելի է ոչ միայն անով, որ Անթէպի Հայոց պատմութեան մէջ հետաքրքրական եղելութիւն մը կը պատմէ, այլ նաեւ անով, որ աշխարհաբար գրուած է եւ զաւելցտական ոճ մը ունի»<sup>52</sup> :

Նկատենք որ այս չափածոյ յիշատակարանը չի կարելի համարել արեւմտեան գրական հայերէնին նախորդող նմոյշ, որովհետեւ այստեղ նման կազմութիւնների չենք հանդիպում, այլ նաեւ աւելի մերձաւոր դձեր ունի Մշոյ եւ Ալաշկերտի բարբառների հիմքի վրայ ստեղծուած մի ինքնուրոյն գրական հայերէնի, որ նկատուում է նաեւ այդ շրջանի շատ ու շատ գրողների գրիչների, տաղերգուների երկերում :

Է օժանդակ բայը, որ իւրայատուկ է Մշոյ բարբառին, ինչպէս՝ Զի այրեցեալ է սիրտ սոցին. թէ յո՛ւր է մոմըն երեկին. Զի ուքօրեայն է աւելին :

Իրրեւ սահմանական եղանակի անցեալ կատարեալ ձեւեր գործածուել են՝ եկին, առին, մընացին, նիրեցին, դըրին, վառեցին, ասացին, բերին, կամիցին, անցեալ անկատարի ձեւերն են՝ կայր, չունէր, գայր, կանգնէր, առնէր, շարժէր :

Բայական կու նախամասնիկով գտնում ենք միայն մէկ բառ՝ կուտայր (տալիս էր) (սահմ. անց. անկ. 3-րդ դէմք) : Հրամայականի ձեւերն են մի տար, մի մեղադրէ՛ք, ենթակայականի օդ — վերջաւորութեամբ՝ տեսօղ, ներկայով՝ աղաչեմ :

Զ նախդիրի գործածութիւն՝ զձեզ, Ի նախդիրի գործածութիւն՝ Ի ժամանակս չոր իշխանին, Ի գիշերի մութ մնացին, գրարարեան բայաձեւեր՝ լոսցին, հաճոյասցին :

51. Գրիգոր Պողաբեան, Այնթապի Հայերէն Գրչագիրներ, «Պատմութիւն Անթէպի Հայոց», Բ. հտր., էջ 416 :

52. Ե. Ս. Քասունի, Անթէպի Հայոց Բարբառախօսութիւնը, «Պատմութիւն Անթէպի Հայոց», Բ. հտր., էջ 317 :

2. Յայսմաուրբ, գրիչ՝ Խաչատուր, Անթափ, 1700 (ՌձԽԹ), չունի գլխաւոր յիշատակարան:

Յիշատակարաններ են գրել Պոյաճի Մահտեսի Արութինի որդի Ակորը 1784 թ.ին խոջա Մանուկի որդի տիրացու Կարապետը, Տէր Գէորգը եւ այլք:

Պահպանուած է հետեւեալը. «Կերիս (քեռի՞ս) լուսարար մահտեսի [Սար]գիսին Ապրիլ իգ, [Թաղ]եցին. ք օր պառկաւ... ապաի մեռաւ, այ ասի կը կարթանայ մենք (մէկ) [հայր] մերիք ասա»<sup>53</sup>:

Մեղ հետաքրքրողը՝ պառկաւ եւ մեռաւ սահմանական անցեալ կատարեալի ձեւերն են, որ նոյնութեամբ գտնուած ենք Ալաչկերտի խօսուածքում: Իսկ կերիս, որ Գ. Պողարեանը կարգացել է քեռիս. հետաքրքրական է իր հնչիւնական փոփոխութեամբ, այդ նշանակում է, որ բառակզրում փ, ք, ք, ց, չ շնչել խուլ պայթականներն ու կիսապայթականները ապաշնչեղանում են: Սա ուշագրաւ երեւոյթ է, որը տեղի է ունեցել հայերէնի արեւմտեան խմբի մի շարք բարբառների ազդեցութեան տակ:

Յաջորդ յիշատակարանի անյայտ գրիչը մեր հետաքրքրող հարցին իրրեւ պատասխան արձանագրել է բարբառային երկու ուշագրաւ երեւոյթներ. նախ թուել է բոլոր ամասնունները (չկան աղաւղումներ), տրուած են իրենց հոլովուած ձեւերը (սեռականտրական) ի, ին մասնիկներով, ընդ որում սեռականով տրուած է՝ «Յունիսի ամսոյն» ձեւով, որը դարձեալ հեռու չէ արեւմտեան խմբի բարբառներից մի քանիսից: Գործածական է է օժանդակ բայը, ինչպէս՝ դեկտեմբերին նազարեց ե կրկին:

3. Յայսմաուրբ, գրիչ՝ Ամիրխան դպիր, Անթափ, 1672–1673 (ՌձԻԱ–ՌձԻԲ) թուականներին, պահպանուած է չորս սիւնականոց ընդարձակ մի յիշատակարան, հետագայ դարերում գրուել են նորերը, որոնք հետաքրքրական են յատկապէս անձնանունների առատութեամբ, ինչպէս Տէր Խաչատուր, Ամիրխան Խոճա Գարիբ, Պաղտատ (կնոջ անուն), Ըրեհան, Պլպուլ, Շահգատա, Շամամ, Մելքոն, Խըտըր (1672 թուական), Պիւլպուլեան Գէորգ, Յակոբ, Ներսէս, Զամրութ, Բէհան, Շահպալ:

Առաջնային շարքի պայթականներից ք պ (Բիւրիւլեան – Պիւլպուլեան) բառամիջում ջ ց ն խոջայ – Խոճայ, դ տ Շահգադէ – Շահգատա, ուշագրութեան արժանի են Խըտըր, Զմրուք, Շամամ, Մայրամ անձնանունները, որոնք գտնուած ենք բուն Ալաչկերտի Խաս-

53. Գրիգոր Պօզարեան, Անթափի Հայերէն Գրչագիրներ, «Պատմութիւն Ամբեպի Հայոց», Բ. հտր., էջ 417:

տուր գիւղում: Խըրըրը միայն անձնանուն չէ, այլ Ալաշկերտի գիւղերից մէկն էլ անուանում է Խըրըր: Ռեհան – Ըրեհան ձեւը, որ տիպիկ է բուն Ալաշկերտի բարբառին, ինչպէս՝ Ռուբէն – Հ'ըՌուբէն, Ռեհան – Հ'ըՌեյան, Ռուսաստան – Հ'ըՌուսաստան եւ այլն:

Այնթապ յիշատակուած է Անթափ ձեւով:

Անձնանուններ՝ Տէր Թորոս, Լալիխան, Մանուկ, Մնացական, Խաչխաթուն, Ուլանէս, Մայրամ, որոնց շարքում գրչական վրիպում պէտք է համարել Օւլանէս ձեւը, որ գրուած է Ուլանէս, որը մեր կարծիքով հայցական հոլովով գործածուելիս ստացել է գ նախդիրը, հ-ն ձուլուել է դ-ին յաջորդող ը-ին:

1774 թուականին գրուած մի այլ յիշատակարան, որը Գրիգոր Պողարեանի համաձայն «գաղափար մը կու տայ ժԸ-ըդ դարու Այնթապի ժողովրդական լեզուին մասին»<sup>54</sup>:

Վկայուած է հետեւեալը.

«Իմաստնացեալն Սողոմոն գրէ ի գիրս իւրում ասելով, թէ լաւ է անապատի բնակիչ քան զկնոջն անըսկամի, լեզուանի եւ բարկացողի կասէ. տես որ եղբարք իմ սիրելիք, կնոջ անըսկամ լինելն որքան մարդու կէշ կու լինի: Դարձեալ գրէ թէ լաւ է իմաստուն մարդու հետ դար գրելն քան զանկէտին հետ ուտել խմելն. գնայ քեզ քեզի միտք արէ թէ կէշ մարդու հետ ուտել խմելը պիլէ լաւ չէ համարէր: Դարձեալ գրէ լաւ է իմաստուն թշնամի լինելն քան զանկէտ բարեկամըն: Այսքան առ այս. էթէ Տէրն կամեսցի թերի մնացեալն դիպող ժամուն զեկուսցուք. սակայն միայն փոքր առակաւ զբանս մեր զէզբաւ արասցուք բաւ է: Գրեցաւ գիրս թուին ԳԻՄՈՆ (1774) Մարտի ԺԷ. օրն»<sup>55</sup>:

Արդ՝ քննութեան առնենք այս յիշատակարանը բանադիտական ու բարբառագիտական դիտանկիւնով:

1. Իբրեւ բանահիւսական ուշադրաւ երեւոյթ, պէտք է նշել, որ Սողոմոն իմաստունին վերագրուած խրատական առածները նոյնութեամբ գտնում ենք մեր կողմից գրի առնուած «Խաստուրի Առածանի»ում<sup>56</sup>:

54. Նոյնը, էջ 423:

55. Նոյնը: Գ. Պողարեանի համաձայն յիշատակարանի բուականը՝ ԳԻՄՈՆ, «պէտք է քակուի այսպէս. — Գ=3, Ի=20, Մ=200, Ո=600, Ն=400: Գոււար՝ 1223 (Հայկական բուական)»: Տես՝ նոյնը, էջ 423, ծան. \*):

56. Տես՝ ՀՍՍՀ ԳԱ Բանասիրութեան եւ Ազգագրութեան ինստիտուտի Ս. Մ. Սահակեանի քղբազանակ:

Համեմատութեան համար բերենք մի երկու օրինակ .

Այնթապ	Խաստուր (Անթապ)
ա) Կնոջ անըսկամ լինելն որքան կէշ կու լինի .	Անըսկամ կընդանիծ թող ու փախի
բ) Լաւ է իմաստուն մարդու հետ դար դրելն, քան զանկէտին հետ ուտել խմելն .	Լաւ ա իմաստուն մարտու հեղ քար քաշիս (կըրիս), քան զանգէղի հեղ ուղիս-խըմիս . (Գիղունին գէրի էղի, զանգէղին մը թակաւօրի) .

## 2. Բարբառագիտական .—

ա) Հնչիւնական նմանութիւններ՝ անըսկամ ( $q > u$ ), քար  $>$  դար, կրել  $>$  գրել (Այնթ .) :

բ) Հոլովական՝ ի հոլովում՝ անապատի, մարդու, մարդու հետ, զանկէտին հետ (սեռական հոլով) (Այնթապ) :

գ) Բայական՝ կասէ (Այնթ .) — կըսա, կասա (Ալշ .), կու լինի (Այնթ .) — կէզնի (Ալշ .), չէ համարէր (Այնթ . — չըհաշուէր (Ալշ .) :

դ) Երկու բարբառներում էլ առկայ է գրաբարեան հայցական հոլովի գ նախդիրը :

ե) Գրաբարեան ձեւեր՝ իմաստացեալն, ի գիրս իւրում, կամեցի, մնացեալն, զեկուսցուի, առակաւ, արացուի :

զ) Դերանուններ՝ այս, այսքան :

Ետնալեզուային շնչեղ խուլի՝ ք  $>$  գ-ի փոփոխուելը օրինակապէս է, ինչպէս դա գտնում ենք քար  $>$  գար ձեւում, կ  $>$  գ-ի՝ կրել-գրել : Սա գրչական վրիպում է :

Մի այլ յիշատակարանում պահպանուած են՝ Յովսէփ, Յակոբ, Մելիք, Եաղութ, Ճուհար, Մնացական, որոնք գտնում ենք բուն Արաչկերտի բնակիչների անձնանուններում, իսկ Գոհար (Ջոհար), որ դառել է Ճուհար, հետաքրքրական է, որովհետեւ բուն Արաչկերտում ո՛ն մի շարք բառերում դառնում է ու, ինչպէս Գոհար-Գույար, մօրուք-մուրուք :

Ետին գրիչներից վկայուած մի յիշատակարանում նշուած է, որ Զէրէթի որի Յարութիւնը Բայագետից իբրեւ նուիրակ գնացել է Այնթապ, ապա Տիգրանակերտ :

Ահա այդ յիշատակարանը՝

«Ի թվին Հայոցս . . . [գրերը ջնջուած են]

Ես Յարութիւն ա . . . [անընթեռնելի է]

Որ եմ միաբան Երուսաղէմի

Յակորայ որդւոյն Ձէրէ [Թայ]  
 Երկրաւ Պայեազտայ, (.....) [անընթեռնելի]  
 Քաղաքն Անթափ եւ քան...  
 կացի, եւ յիշեալ Տիգրանա  
 կերտ նվիրակ գնացի, ի ժամա  
 նակս Տեառն Կիրակոս սրբազան  
 Հայրապետի, որք հանդիպիք  
 այսմ տառի եւ գծողիս, տուք  
 զողորմի, եւ Տէր Յս. ձեզ ողորմի»<sup>57</sup>:

Այստեղ յիշատակուած Յարութիւն, Յակոբ, Ձէրէք, Կիրակոս անձնանուններում բարբառային հնչերանդները տարբերութիւններ չունեն: Յիշատակարանի անյայտ հեղինակը թողել է մի հետաքրքրական վկայութիւն եւս, ըստ որի Երուսաղէմի միաբան Ձէրէթի որդի Յարութիւնը բայագեացի է (այն է՝ «Երկրաւ Պայեազտայ»), որը 1700–1800–ական թուականներին յայտնի էր իրրեւ մեծ նահանգ, որի մէջ մտնում էին մի քանի շրջաններ, ինչպէս նաեւ Անթապը եւ Ալաշկերտը:

4. Աւետարան. գրիչ եւ ծագող՝ Նիկողոս, 1658 (ՌՃԷ), գրուած է թեան վայրը նշուած չէ:

Յիշատակարանում վկայուած է, որ «կրկին նորոգեցաւ Սր. Աւետարանս ձեռամբ մահտեսի Եղեային, Անդէպու հասարակ ժողովրդին, ի Դուռն Սր. Ած. ամին եկեղեցւոյն, թվին ՌՄԵ. ին (1756)»<sup>58</sup>:

Այստեղ գործածուած է Անդէպու ու սեռական հոլովի մի ձեւ, որ գտնում ենք նաեւ բուն Ալաշկերտում՝ Հ'Անպըզու:

5. Կանոնագիրք. «Գրիչ՝ առաջին գրիչին անունը անձանօթ է. երկրորդ գրիչը որ եղած է շարունակող մը, կը կոչուի Փիլիպոս Երէց: Վայրը՝ Քիլիս?։ Թուական՝ ՌՃԾԲ (1703): Արարող՝ անձանօթ: Գիր՝ մաքուր նօտը:

«Զեռագիրս կը պարունակէ Կանոնական 34 գլուխներ: Վերջին գլուխ մըն ալ (1Ե) նուիրուած է 92 պէսպէս հարցումներու:

«Յիշատակարաններ.—

ա) Երկրորդ գրիչէն, քիւղահամար հատուածին ներքեւ. «... Թվին ՌՃԾԲ Յունվարի ԺԹ. ի Քիլիս ձեռամբ Փիլիպոս Երիցոյ գայս ճիւղահամարս գրեցի»:

բ) Յետին գրիչ Տէր Ներսէսէ.

57. Գ. Պօղարեան, Այնթապի Հայերէն Գրչագիրներ, «Պատմութիւն Անթապի Հայոց», Բ. հտր., էջ 423–424:

58. Նոյնը, էջ 425:

«... դայս փոքրախրատոս, մեղաւոր եւ անարժան զՏէր Ներսէս գրեաց թիլին ՌՄԻԳ (1775) եւ Մարտի ամսեան ԻԳ.ին»:

«Գ) Նոյն գրելէն.

«Ի թվականիս Հայոց ՌՄԻԹ (1780) եղեւ բարկութիւն Աստուծոյ, ի քաղաքիս Անքափ: Փաշա մի եկաւ անունն կոչելի Խալտի Փաշայ Ողլի, նստաւ հետ Առըշվան Ողլի կոչեցեալ փաշայի հետն հինգ ամիս ի Անթափ շատ ենիչերի խըխդեց, շատ տուն թալանեց, էթէ աղքատի եւ էթէ հարուստի, եթէ Հայու եւ եթէ տաճկի: Եւ ետ նորէն եկաւ ի վերայ քաղաքիս Գիլիս, ու Մարտի ամսոյն Ի. օրն սկսաւ պատերազմիլ. Հինգշաբթի օրն պատերազմեցաւ ի հետ Գիլիսու, ցորեկն քուն գիչերն արթուն, եւ սկսաւ թոփ զարկել Շերիապիլ. Ուրբաթ կէս աւուր ետեւ փլեց Շերիապիլ. նստաւ այն գիչեր Շերիապիլի ետին. բազում սեկսեն ըսբանեց Շէրհէպիլի մէջն. ոմանց թեւն եւ ոտքն, գլուխն գտրեցին փալթայով եւ սաթրով եւ թրով: Եւ ետ նորէն առաւօտուն որ եղաւ, որ է շաբաթ, իջան ի քաղաքս Գիլիս. փաշահ զեխալալիքն, մղղպէքն, Ֆէլէհէքն եւ այլ զոյնեւըսգոյն եսկէրով ըսկսան թալնել ի քաղաքս Գիլիս. ամեն դոռվիքայ գտրտեցին, եթէ եկեղեցի եւ եթէ ճամբի եւ եթէ խանուղ մինչեւ պետրեստեն, եթէ մալ եւ եթէ ըղզակ, մինչեւ ճէքուճ որ հս. հիչ բան մի չթողին, ամեն էլ թալնեցին. ըմայ լաքին խասարաթութիւն չեղաւ. լաքին տաճկի երզի տղայքն շատ առին օսմանցիք. Հայու տղայքն Աստուած պահեց. մէգ Հայու տղայ մի չառին, փառք եւ դոհութիւն փրկողին զմեզ: Գ. օր Գիլիս նստաւ եւ ելաւ գնաց ի Աղէզ նստաւ: Այս փորձանքն որ եկաւ ի վերայ, վասն մեղաց մերոց էր. ամեն քաղաքիս կին եւ այր, հարս եւ տղայ փախան ի լեռն Հալափ, մինչեւ յերեք ամիս. եւ ետ նորէն եկան եվել ամիս իր տունայ նստաւ, որովհետեւ շատ սալիեան վէ տոքանք առին. Քուրթ Մէհէմէտ անուամբ Ուոռում Ղալապի մուսէլիմ մի նստեցուցին ի Գիլիս: Ես անարժան եւ ոտից կոխան Տէր Ներսէսս գրեցի այս փոքրիկ թվականս, որոց փրկեսցէ Տէր Աստուած ամենայն փորձութենէ ամէն: Ես սակաւ գրեցի դուք շատ իմանայք»<sup>59</sup>:

Կարծում ենք, որ այս ընդարձակ յիշատակարանը աւելի հարազատ է արտացոլել Այնթապի բարբառի հնչիւնաքերականական յատկանիշները, քան միւսները:

Մանրակրկիտ քննութիւնը մեզ յանդեցնում է հետեւեալին.

1. Յիշատակարանում հարազատօրէն պահպանուած է դեռ մինչեւ օրս բուն Ալաշկերտի (Անթապ) խօսուածքում գործածական մի հտաղաս անորոշ դերանուն — յօղը, ինչպէս՝ փաշա մի, տղա մի,

մուսէլիմ մի, բան մի եւ այլն: Սա արդէն էական կարեւոր յատկանիշներէն մէկն է, որովհետեւ ինչպէս ցոյց են տալիս տարբեր բարբառներում տեղի ունեցած փոփոխութիւնները, առաջին հերթին մի-ն փոխում է մը, ըմ, մ', մին եւ այլն:

2. Բուն Ալաշկերտի խօսուածքում առկայ է տրականով, հայցականով եւ բացառականով հանդէս եկող ի նախդիրը. օրինակ՝ գընաց հարդ, Մուրադ գեդ ի քյանարնէրուն, չուր օրիկն ի մահուն, ի միննէ, հայցականի հետ գործածուելիս երբեմն կորցնում է ի նախդիրը եւ ձեռք է բերում ներդոյականի իմաստ. նըստն տուն գիրկ կըկարտա. քաղաք տէսա Արամ (Արամին քաղաքում տեսայ), գընաց ի տուն, նըստավ ի քար:

Այնթապի մատենագիտական հին վկայութիւններում նշուած են ի նախդիրի (տրականի հետ) գործածուելու մի քանի փաստ. ի քաղաքիս Անքափ, հկաւ ի վերայ քաղաքիս (այստեղ վրայ կապը նախդիր է), ի քաղաքս Բիքլիս, այս փորձանքն որ եկաւ ի վերայ, փախան ի լեռն ի Հալափ, նստեցուցին ի Քիլիս:

3. Այնթապի բարբառում, բուն Ալաշկերտի խօսուածքի նման, հայցական հոլովով հանդէս եկող խնդիրը, որոշեալի դէպքում իր վրայ կրում է տրամարանական շեշտը եւ ստանում է զ նախդիրը, իսկ առանց գ-ի՝ ստանում է ըն/ն յօդեր. ինչպէս՝ անունն (ըն) կոչվի, դելպաշիքն (ըն), մղըպէքն (ըն), ֆէլէքն (ըն) սկսան քալնել, այս փորձանքն (ըն) որ եկավ, սեռական-տրականով՝ ըսբանեց Շէրհէպիլի մէջն (ըն), ու մարտի ամսոյն ի օրն սկսաւ պատերազմիլ:

4. Ա յօդը, որ առաջացել է ոչ քէ քրդերէնի կամ ը է կամ ա-ի փոխուելու անհաւանական ճանապարհով, ինչպէս սխալմամբ նկատել են մի շարք բարբառագէտներ, այլ սեռականի ա արտաքին թեքման հոլովման եւ բարդացման ուղիով՝ տրականի իմաստով գործածուելիս (նի+ա, ք+նի+ա), ինչպէս՝ ամէն դռովիքա գարտեցին/դորվըկտան «տեղեր» (Ալշ.):

Եւ ետ նորեն եկան եվել ամիս իր տունայ նստաւ, պէտք է լինէր եւ ետ նորէն եկան, եվել ամիս իրենց տունեայ նստան: (Տունք, տուննի, տունա, տունայ) ինչպէս ուղղ. Կարօն, սեռ. Կարօ տրական Կարօյ (բուն Ալշ.):

5. Ետադիր կապերի նախադիր գործածութեան դէպքեր, որ առկայ է Մշոյ, Ալաշկերտի եւ այլ բարբառներում (հրդ ուրանց, մըն բ'երնիս, վըր իմ չըվնին, հէդէվ ակնջի եւ այլն), այս յիշատակարանում արձանագրուած է հետեւեալը. հետ կորչվան օղի, պատերազմեցաւ ի հետ Քիլիսու, ի վերայ քաղաքիս Քիլիս եւ այլն:

6. Գրաբարեան ձեւեր. եղել բարկութիւն Աստուծոյ ի քաղա-

ֆիս Անթալիայ եր ետ նորէն եկաւ ի վերայ ֆաղաֆիս Քիլիս, փառք եւ գոհութիւն փրկողին գմեգ. որոց փրկեցցէ Տէր Աստուած ամենայն փորձութենէ, ամէն. վասն մեղաց մերոց (էր) : *Գործածուած է միայն Աստուած եւ նրա զօրութեան մասին խօսելիս : Սա սոսկ ոճաւորում է եւ ուրիշ ոչինչ :*

7. Շաղկապներ. գործածական է աւելի շատ եւ (յէվ) դրաբարեան շաղկապը, էթէ-ն գործածուած է քէ-ի իմաստով, ինչպէս՝ շատ տուն թալանեց, էքէ աղքատի եւ էքէ հարուստի, եքէ Հայու եւ եքէ տաճկի. եքէ եկեղեցի եւ եքէ ճամի եւ եքէ խանուդ :

Որ շաղկապի աշխարհարարին յատուկ կանոնաւոր շարադասութեամբ գործածուած դէպքեր, ինչպէս՝ «Եւ ետ նորէն առաւօտուն որ եղաւ, որ է շարաթ, իջան ի քաղաքս Քիլիս» :

Ու շաղկապի գործածութեան մէկ դէպք՝ «Եւ ետ նորէն եկաւ ի վերայ քաղաքիս Քիլիս, ու Մարտի ամսոյն Ի. օրն սկսաւ պատերազմիլ» :

Որովհետեւը գործածուած է մէկ անգամ :

Ըմա («բայց») շաղկապի գործածութեան մէկ դէպք՝ «ըմա լաքին» :

Բուն Ալաշկերտում պահպանուած են ըմա, հըմա, հըմա քէ համադասական շաղկապները :

8. Յիշատակարանում տեղ են դտել հետեւեալ բայածեւերը՝ եկալ, տէսալ, խեղդեց, քալանեց, պատերազմեցան, սկսալ քով գարկել, գտրեցին, իջան, ըսկըսան, քալնել, առին, պահեց, փախան, նստեցուցին, չքողին, չեղալ, ինչպէս նաեւ եղել, փրկեցցէ : Սահմանական եղանակի անցեալ կատարեալի երրորդ դէմքի եզակի եւ յոգնակի թուերով արտայայտուած այս բայածեւերից հեշտութեամբ կարելի է կազմել մնացած ժամանակածեւերը : Այս շարքում ուշադրութեան են արժանի՝ ըսկսալ քալնել, սկսալ քով գարկել, նստեցուցին, որոնք իրենց հնչիւնական արտասանութեամբ մերձակցութիւն ունեն բուն Ալաշկերտի խօսուածքի հետ : Նկատելի է, որ պատճառական՝ նստեցուցին (Այնթ.) դառնում է նըստըցուծին (Ալշ.) (ու, ը) :

Հնչիւնական փոփոխութիւններն առկայ են հետեւեալ բառերում .

կ գ, կտրեցին գտրեցին, կտրտեցին գտրտեցին : Այս երեւոյթը խիստ ընդորոշ է միայն արեւմտեան խմբի խօսուածքներին :

9. Հոլովական մասնիկների առկայութիւն :

Ի հոլովում՝ փաշայի, ենիչերի, աղքատի, հարուստի, տաճկի փրկող ին (տրական հոլով) :

Ու հոլովում՝ հայ - հայու, առաւօտ - ուն (տրական) :  
10. Բառակազմական՝ գույնագույն, կէսավուր :

Ամփոփելով եւ ի մի բերելով Այնթապի դրչադիր մատենաների յիշատակարաններում պահպանուած բարբառային երեւոյթների քըննութիւնը, յանգում ենք այն եզրակացութեան, որ՝

ա) Այնթապ քաղաքի եւ Անթապ դաւառի բարբառային միաւորները հիմնականում ունեն հնչիւնաքերականական նոյն յատկանիշները .

բ) Եղած տարբերութիւնները ձեւաւորուել են արեւմտեան խմբի հայ բարբառների միջավայրում եւ նրանց խօսուածքային ուժեղ ազդեցութեան տակ .

գ) Այնթապ քաղաքի հայ ազգարնակչութիւնը տեղաշարժուել — եկել է հին Անթապից եւ նոր բնակավայրը, ի պատիւ իրենց հայրենի դաւառի, կոչել է Այնթապ :

Այնթապի բանահիւսական եւ բարբառագիտական նիւթերի թերին ու բացը լրացնելու համար մեծապէս օգտուել ենք բուն Ալաշկերտի խօսուածքից, գտնելով որ դրանք 10-18-րդ դդ. մտել են մէկ բարբառային միաւորի մէջ : Դարերի ընթացքում պարբերաբար կրկնուող պատերազմների պատճառով Հին Անթապի (Andiabe) բնակիչները կամաց-կամաց թողել են իրենց հայրենի գիւղերը եւ տեղաշարժուել դէպի Այնթապ, Ալաշկերտ եւ Արարատեան աշխարհ :

## Բ.Ա.Ռ.Ա.Ն

Ստորեւ ներկայացնում ենք բարբառային բառերի ու արտայայտութիւնների նոյն ձեւերը, որ առկայ են Այնթապի եւ բուն Ալաշկերտի բարբառներում : Այնթապի բարբառին վերագրուող բառերը վերցրել ենք «Պատմութիւն Անթէպի Հայոց» աշխատութեան 2-րդ հատորի «Բառգրքովից», իսկ Ալաշկերտինը լրացրել ենք մեր «Ալաշկերտի Բարբառի խօսուածքները ինքնուրուային Հայաստանի Տարածքում» ձեռագիր աշխատութիւնից :

Այնթապ

Անթապ (բուն Ալշ. խօսուածք)

— Ա —

ազապ

ազաբ, «ամուրի»

աղնաւոր

աղնացճոր, «աղնուական, աստուածային»

աթոռ

ատոռք, «եկեղեցու աթոռը»

Այնքապ	Անքապ (բուն Այլ․ խօսուածք)
ախկատ	ախկադ
ախտեւ էթ	էխտեւ
ակ	Հ'ադ 1․ սայլի անվակը, 2․ թոնրի ակը
ակիւշ	Հ'ադիւշ, «կրակ խառնելու երկաթէ ունելի»
ահա	ահան
ադէկ	ադէգ, «լաւ, բարի, գեղեցիկ»
ադի	ադի, «լեղի»
ադհաց	ադահաց
ադմուր	ադմուր, «դառը, անտանելի հիւթ»
աճուկ-պուճուկ	Հ'աջուջ-պաջուջ «թղուկներ, ծիծաղելի»
ամբան	ամբան, «անբան»
ամպար	ամբօր
ամպիտան	ամպիդան, «անպիտան»
ամօթ	ամօտկ, «սեռական անդամ»
այլասկ	այլասկ, «այլ ազգի»
անթառամ	անթառան, «ծաղիկ, իգական սեռի յատուկ անուն»
անթեղ	անթեղ, «թոնրի մէջ մոխրի տակ թաղուած թէժ ածուխ»
անժուր	անժուռ, «իւզը պակաս, անհամ»
անշահ	անշայ
անշնորք	անշընորկ
անտէր	անտէր, «առնանդամ»
ապա (թքր․ մըրաքոյր)	աբա, «մայր»
ապուռ-ճպուռ	աբուռ-ժբուռ, «խառնիխուռն, խառնի-ճաղանջ»
առօք-փառօք	առօկ-փառօկ
ասկասէր	ասկասէր
արդար	արտար
— Բ —	
բաղարջ	բ'աղարջ
բամպակ-պերան	բ'ամբադ-բէրան
բնկալ	բ'ընդալ
բուխարի, բուխերի	բուխարիգ, բուխէրիդ

Այնքայ	Անքայ (բուն Ալշ․ Խօսուածք)
բուխսիրա բրդուճ (կտոր բրդուճ ըլլա)	փուխըրսիրդ, «չուտ լաց լինող» բ'ըրդուճ, բըրդուջ (էղաւ կըտոր մի բըրդուճ)
— Գ —	
դլոխ վլայ էթ	դ ըլօխ վըլայ յէր, «հարսի դլուխ լուալը՝ 7-րդ օրն է, որ սահսպանուած է մինչ օրս»
դոռում-դոչում	դ'օռուն-դ'օճուն, դ'օռում-դ'օճում, «լաց ու կոծ, աղմուկ-աղաղակ»
դունդ ու կոլոնճ դուննա (գուռը) «բաղնիքի առաջին մասը»	դ'ունդ ու կլոնճ, դ'ունդ ու կօլոնճ (ջ) դ'ուռ, «քալէ գուռեր ջրի համար»
— Դ —	
դահ	դայ, դախ, «տարիքն անցնել, տարիք- անցած» դայցած, դայցուդ
դարդակ կլօխ	դարւալ կըլօխ, խօտ կըլօխ
— Ե —	
եօթնօր-յօթդիչեր	յօանօր-յօտդիչեր
— Զ —	
Զառգարդար դէմպլի զըրգա, «դռան նիդ»	ծառգարտար զըմբիլ «ծղոտէ գամբիւղ, ծղոտէ աթոռ» զըռգա, «դռան երկաթէ շղթայ՝ կողպեքի համար օղակուած»
— Է —	
էտի մեղք է	յէդի մէխկ է, յէդի մէխկ ա, «վերջին մեղքս», վերջին դաւակս, վերջին գործը»
էրթաս պարով	էրտաս բարով

## — Ը —

ըխտաւոր

ըշմար, «նշանացի  
հասկացնելը»

ըխտաւոր

հիշմար, ըշմար, «նշանացի հասկացնելը»  
հըմըտել, «աչքով նայան տալ»

## — Թ —

թակուլի

թարթափ

թեթեւօղիկ

թերխաշ

թթու հերես

թիփի

թակուլի, «թագուհի», նոր հարս, թա-  
կուլիթօրթապ, «հաւաքել-տանել, սրբել տա-  
նել»

թէտէվօղիկ

թերխաշ

թըտու հերես

թիպի, «ձիննախառն սաստիկ քամի»

## — Ժ —

ժամ

ժամ, «եկեղեցի»

## — Ի —

իրիսկին, «տէրտէրակին»

իրիցկին, իրիծկին, իրիսկին, «երէցկին»

## — Լ —

լամբիտ

լափլըփալ

լէնկէրի

լը՛ըրճուկ

լըմ՛լըմալ

լուս

լուսա՛ողի

լըմպատ, «մեծ, խոշոր մարտ, մեծ քար»

լապըպել, ապըրպել, լըպըպել, «մթու-  
թեան մէջ շօշափելով շարժուել, չո-  
րեքթաթ դնալ»լանգառ, «մեծ կողով», լանգառի, «մեծ,  
տափակ պղինձ», «խարիսխ»

լըղըրճուկ, «նիհար, թերաճ»

լըմ՛լըմալ, «ծամճմեկ, լեզուով եւ առամ-  
ներով հայ կտրատել»

լուս

լուսաօղի, լուսօղի, «ասուում է միայն  
կրօնաւորներին համար»

Այնքայ

Անքայ (բուն Ալշ. խօսուածք)

— Խ —

խաղան, խըզան (չուն)	խըզբան, խըզան, խըզղուն, «կծող, կատաղի շուն»
խաղք խայտառակ խան, «իջեանատուն»	խախկ ու խա'ղառազ խան, «իջեանատուն»
խանկըիլ	խանդըրել, «գունաթափուել, մաշուել, խաւը թափուել»
խալօխ	չաղօղ, հա'ող
խըմխըմ	խըմխըմ, «քթի տակ խօսող մարդ, խմխմալ»
խոտկիր	խոտկուր, «խոտով լցուած ներքնակ»
խօշիկ	խրոնչուզ, խրոճիկ

— Հ —

համանք	համայք
համբառնալ	համբարձուել
համմէ	հըրամէ
հատիկ-հատիկ	հազիզ-հազիզ, «խաշած յորեն»
հարկօ'օր	հարդաւոր, հարզա'որ
հարսա, հարսօ	հարսէ, «մեծ հարսը»
հարսնքոր	հարսընքուր, «հարսի քորը հարսանեաց հանդէսին»
հակիթթ	հալզիտ, «ձու»
հելլել-մաշիլ	հալլել-մաշել, հըլհըլալ
հէրիսէ	հիրիսա, «հարիսա»
հէօնկիւր-հէօնկիւր	հօնկուր-հօնկուր, հօնկուր-հօնկուր
հոգելուց-հանդեցելոց	հօկէլոց-հանդուցելոց, «մահուան վերջին պահը»
հիմ	հիմ, «հիմք»
հինմաշ	հընմաշ, «մաշուած»

— Ծ —

ճաղ	ճաղ 1. «դուլպայ հիւսելու շիւղ», 2. «սայլանիւների ճաղերը»
ճենճ	ճենջ, «ճենճոտ, ճարպահոտ»
ճորճորալ օլ	ճօրճօրան, «չորորալ»
ճոզալ	ճըռըզած, «ճոզալ», կուչ դալ, կծկուել

## — Մ —

մաթիւլ	մատիւլ, «ոջիւլ»
մայիւլ օլ	այիւլ-մայիւլ, «զմայլուել»
մանանայ	մանանայ
մանուշակ	մանուշակ
մանտր	մանդըր
մաշ	մաշ, «լորագզի բոյս սպիտակ հատիկնե- րով»
մատղաշ	մաղղաշ, «փոքրիկ, թար՛, դալար»
մարսական	մարսական՝ ան՛ուշ, մարսական «Մարսողութիւնդ լաւ ըլլայ» միաս- տով բարեմաղթութիւն մը՝ սեղանէն ելնելու ատեն
մեղօք	մեղօք (էդի մեղօք գործ ա)
մենզաւոր	մէնձաւոր
մեռոն	մէռոն
մէր	մեր
մէրթէք	մարտադ փայտէ կոնդեր
մըշ-մըշ	մըշալ, մըշմըշալ, «քնեյ, հանգիստ քնել»
մըթել	մըտել, «վերմակի կամ ներքնակի կոշտ աստառ»
Միջինք	միջինք
մղմղել օլ	մըղմըղել, «մտատանջուել»
մոդ-մոդ	մօզել, «խենթի պէս շարժուել, մոզ անել»
մուխ	մուխ, ծուխ

## — Ն —

Նարեկ	Նարէգ, «ծանօթ աղօթագիրք»
նէննիկ, «քուն եղիր»	նաննիգ
նէրկիդ	նարգիդ, «նարգիդ ծաղիկը»
նիշէ	նիշա, «թրջած ցորենի հատիկ»
նիվիկ	նըվիգ, «վայրի բանջարեղէն»
նշան	նըշան
նշար	նըշխար

Այնքայ

Անքայ (բուն Ալշ · խօսուածք)

— Ծ —

շալ	շալ, «դօտի, գլխի ծածկոց»
շալվար	շըլվար, «անդրավարտիք»
շաներես	շանէրես, «անամօթ»
շէկ	շալագ
շէն	շէն, «շէն մնաս»
շըրշըր	շըռշըռ, «ջրի ձայնը»
շնթոկեւ օլ	շնտըռգեւ, «չան պէս պառկել, քնել»
շնորք	շնորկ
շոֆոր	շընավոր
շուլալ	շուլալ, շուլըլըլեւ «շուլալուել, մեծ-մեծ կարել»

— Ու —

ուտելիք	ուղելիք, «կերակուր»
---------	---------------------

— Զ —

շանթիկ	շանթա, շանտիկ
շարէ	շարա, «ճար» («էլ շարա չկայ»)
շըրա	շըրաղ, շըրագդան, «ճրագի լոյս, լոյս-լուսաւոր»
շոռ	շոռ «հարրուխ»

— Պ —

պակաս	պագաս, «խելապակաս, յիմար»
պատուկար էթ	պագուկար
«ձեւուած աստառի դիմացի եզրերը իրար կարել»	
պարապ կլոխ	պարար դըլօխ, «դատարկագլուխ»
պարզանք	պարզանք, «պարծանք»
պարզենալ	պարզէնալ, «պարծենալ»
պիճիլիկ «պստլիկ»	պիջիլիկ, «փոքրիկ, պստիկ»
պխեր	բէ խեր, «անբարեացակամ»
պուղլուր	բ րղլուր, «բղլուր, ճաւար»
պտուկ	պըդուկ, «ստինքի կլոր ծայրը»

## Այնթապ

## Անթապ (բուն Ալշ · խօսուածք)

— Զ —

Զէլէտ  
 Զէօրդէն  
 Զոջ  
 Զուրհամ

Զալլադ  
 Զըրօրդան, «Զըյորդան»  
 Զոճ  
 Զըրհամ, «անհամ»

— Ռ —

ռահան

ըոէհան, «ոեհան»

— Ս —

սալ  
 Սաղմոս  
 սասանիլ  
 սատանա  
 սատկել օլ  
 սարատ  
 սըլլել օր  
 սըսեռ  
 սիւյիւք  
 սխտորճուր  
 սոխարանս  
 սուտ փարիսեցի

սալ, «սալ»  
 Սաղմոց  
 սասանել, «սասանեցնել»  
 սադանա  
 սատկել  
 սառատ, «մեծ անցքերով մաղ»  
 սըլլալ, «սահել, ցած ընկնել, գլորուել»  
 սիսեռ  
 ցըվիք, «տանիքի եզրի դուրս ցցուած  
 մասը»  
 սըխտօրջուր, «սխտորի ջուր»  
 սօխարած, «սօխարած»  
 սուտ փարիսէտէն, «կեղծաւոր»

— Վ —

վանք  
 վաստակ  
 վասակ  
 վարճապետ  
 վարտիկ  
 վերնատուն  
 վիճակ

վանկ, «վանք»  
 վաստադ, «վաստակաւոր, ժառանգորդ,  
 արդիւնք»  
 վասակօրէն, «դաւաճան, մատնիչ, լրտես»  
 վարժարեդ  
 վարտիկ, «վարտիք»  
 վերնատուն, «գլուխ» իմաստով  
 վիջադ, «Համբարձման վիջադ»

## — Տ —

տանջանք	տանջանք
տանտրիկին	տանտրգին, «տանը հոգ տանող կինը»
տապլտիլ	թափըլտել
տառապալ	դառարա, «փայտէ փականք, դարբաս»
տառոս	դառոց, «բարին կրկնուի դիմացինի հետ»
Տէրընտաս	տէրընդէս
տըռ-տըռ	տըռ-տըռ, տըռտըռալ, «տրտնջալ»
տղալ	տղալ
անօջնէք	տընօխնէնք, տընօրչնէնք, «տունը օրհնել»
տոտիկ	տօղիդ, «երեխայի ոտքը, քայլելը»

## — Փ —

փալան	փալան
փատտոս	փատտոց, «փաթոց»
փելոն	փիլօն
փեռ	փառ, «աղօրիքի, ջրաղացի պտտանիւի թեւ»
	փառիկ, «քայլուածքի տեսակ»
փէթէկ	փէտադ
փէնչիկ	փընճիդ, «կտոր-կտոր եղած խոպոպիկ»
փինթի	փինտի
փիսիկ	փիսօ, փիշօ
փորցաւ	փօրացաւ, «փորցաւ, մտահոգութիւն, մտատանջութիւն»
փուք-բորան	բուք-բօրան
փսոր	փըսար, «մանր-կտոր», փըսորել «կտրել»

## — Ք —

քառասունք	քառասունք
քառկին, քեռկին	քէռէդին
քարկոզել	քարկոձել, «քարակոծել»
քարսիրտ	քարսիրդ
քէյվանի	քէյվանի, «աղնուական մարդ»

Այնթապ	Անթապ (քուն Ալշ. խօսուածք)
քէօզ	քօզ, «կայծ, կրակ, կտրած ածուխ, արեթի վառուած ծայրը»
Քրիստոս	Քրիստոս
քոսոս	քօսոք
քունուկ	քունաք, քօսաք
— 0 —	
օշնեա՛ Տէր	օրշնա Տէր, Տէր օրշնա, «օրհնեա՛ Տէր»
օջիլ	օճիլ
օսկի	օսկի
օսկոբ	օսկոս
օրէնք	օրէնկ
օրթուտ	օստոք, «որդնած»
օրօրի Ասվադ	օրօրի ասված

## ANTAB (ANDIABE) - AINTAB HISTORICAL AND PHILOLOGICAL VERIFICATIONS

SOUREN M. SAHAGUIAN

(Summary)

According to the **Armenian History of Aintab** (editor: K. A. Sarafian, Vols. I, II, Los Angeles, 1953) the city of Aintab in Cilicia was rebuilt in the X and XI centuries by the Armenians who had migrated there from the different villages of the province of Antab (Andiabe) of Greater Armenia. Antab is the historical Alashkert of Armenia, some of whose natives were able to escape the 1915-1918 massacres. These natives, who now live in Soviet Armenia, still keep their dialect. Thus, the dialect of Antab (Andiabe) has survived in two branches, those of Aintab and Alashkert.

Based upon the above-mentioned fact, the author develops his study under the following subtitles: **About the Question Concerning the Name Antab (Andiabe), Aintab (in Cilicia), Philological Verifications, Etymology of the Dialectical Words in the Colophones, and a comparative Dictionary.**